5.qxd 18/03/2025 11:41 Page 1

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 14 մարտի 2025թ. թիվ 5 (609)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԵՆ ԿԽՄԿ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունել է Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակության (ԿԽՄԿ) դաշտային թիմի ղեկավար Ավետիք Փաշայանին, պաշտպանության գործառույթների համակարգողի տեղակալ Վալերի Յարմակին եւ պաշտպանության գործառույթների տարածքային ներկայացուցիչ Լիանա Արզումանյանին:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին ԿԽՄԿ կողմից 2024 թվականին իրականացված ծրագրերի ընթացքը եւ արդյունքները, ինչպես նաեւ՝ 2025 թվականին նախատեսված ծրագրերի բովանդակությունը:

Ավետիք Փաշայանի ներկայացմամբ՝ 2024 թվականին Գեղարքունիքի մարզում ԿԽՄԿ-ի կողմից 120 կիլովատ ժամ հզորության արեւային ֆոտովոլտային կայան է տեղադրվել Ճամբարակի առողջության կենտրոնի շենքի տանիքին, 3 կիլովատ ժամ հզորության արեւային համակարգեր՝ Վարդենիս համայնքի Կութ, Ազատ, Նորաբակ եւ Դարանակ բնակավայրերի ԲՄԿ-ների շենքերի տանիքներին: Իրականացվել է Վարդենիս համայնքի Շատվան ԲՄԿ նոր շենքի կառուցման նախագիծը, որի շինարարական աշխատանքներն արդեն գտնվում են ավարտական փուլում:

Կախակն եւ Ախպրաձոր բնակավայրերի 101 տնտեսությունների բաժանվել է աշնանացան ցորենի սերմացու՝ 2-ական հեկտարի չափով ցանք կատարելու հաշվարկով: Կախակնի 18 տնտեսությունների միկրոձեռնարկատիրական աջակցության դրամաշնորհի շրջանակներում տրամադրվել է դրամական աջակցություն՝ միջինը 700 հազարական դրամի չափով: Ներքին Շորժայում 11 տնտեսություն ստացել են դրամական աջակցություն՝ 500 հազարական դրամի չափով՝ անասուններ ձեռք բերելու նպատակով: Ջաղացաձորում առավել խոցելի խմբում գտնվող 24 ընտանիքների տրվել է միանվագ դրամական աջակցություն՝ 130 հազարական դրամի չափով: Կախակնում ու Ախպրաձորում վերանորոգված 4 բնակարաններից յուրաքանչյուրի վրա ծախսվել է 3,5 միլիոն դրամ:

2025 թվականին Գեղարքունիքի մարզում ԿԽՄԿ հաստատված ծրագրերով 80 կիլովատտ ժամ հզորության արեւային ֆոտովոլտային կայաններ կտեղադրվեն Վարդենիսի բժշկական կենտրոնում, 10-ական կլիովատտ ժամ հզորության կայաններ՝ Մեծ Մասրիկի եւ Ծովակի բուժամբուլատորիաներում: Ջաղացաձորում կիրականացվի միկրոտնտեսական աջակցության ծրագիր՝ տնտեսությունների համար անասուններ ձեռք բերելու կամ հողագործությունը զարգացնելու նպատակով: Բնակարանաշինական աջակցության եւ հողերի մելիորացման ծրագրեր կիրականացվեն Կուտականում, աշնանացան ցորենի սերմերի տրամադրման ծրագիր՝ Կուտականում, Ազատում, Կութում, Նորաբակում, Ջաղացաձորում:

Վարդենիսի բժշկական կենտրոնի բուժանձնակազմի համար կկազմակերպվեն դասընթացներ՝ «Անհետաձգելի բուժօգնություն», «Զանգվածային տուժածներով պատահարների կառավարում» թեմաներով: Վարդենիս համայնքի բնակավայրերում կշարունակվի 2024 թվականից մեկնարկած եւ ընթացքի մեջ գտնվող սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագիրը, որի շահառուներն են հակամարտությունից տուժած ընտանիքները եւ անձինք:

Պաշտպանության գործառույթների ներկայացուցիչներ Վալերի Յարմակը եւ Լիանա Արզումանյանը Գեղարքունիքի մարզպետի ուշադրությանը ներկայացրին ԿԽՄԿ կողմից Գեղարքունիքի մարզում 2025 թվականին ներդրվող նոր ծրագիրը, որի հիմնական շահառուները Արցախյան հակամարտության՝ 2020-ի աշնան սրացման հետեւանքով անհայտ կորած անձանց ընտանիքներն են:

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն իր գոհունակությունը հայտնեց ԿԽՄԿ կողմից 2024 թվականին իրականացված ծրագրերի ընթացքից ու արդյունքներից ու հավաստիացրեց, որ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ-ԿԽՄԿ համագործակցության շնորհիվ 2025 թվականին եւս հաջողությամբ կյանքի կկոչվեն հաստատված բոլոր ծրագրերը, որոնք մեծապես կթեթեւացնեն պատերազմների ու բռնի տեղահանությունների հետեւանքով կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված ընտանիքների հոգսերը:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

«Սիրելի կանայք, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ գարնանային այս գեղեցիկ տոնի առթիվ: Համոզված եղեք, որ ձեր անսպառ բարությունը, նվիրվածությունն ու հոգատարությունը աննկատ չեն մնում, եւ դուք, անառարկելիորեն, արժանի եք շատ ավելի մեծ գնահատանքի՝ նաեւ առօրեական դժվարությունները անտրտունջ ձեր ուսերին վերցնելու, մեր պետության համար արժանի քաղաքացիներ կրթելու, նրանց ազգային արժեքների եւ հայրենասիրության ոգով դաստիարակելու դժվարին, բայց ազգաշահ առաքելությունը համբերությամբ իրագործելու համար:

Մեր երկրում չկա որեւէ ոլորտ ու բնագավառ, որտեղ չզգացվի կանանց բարենպաստ ներկայությունը եւ ակտիվ մասնակցությունը: Նրանք ուսուցիչ են, բժիշկ, ձեռներեց ու պետական գործիչ, զինվորի մայր են ու զինվորական:

Առողջ եւ ամուր ընտանիքը մեր ժողովրդի եւ երկրի հարստությունն է, իսկ այդ հարստության մշտարթուն պահապանը դուք եք, սիրելի՛ կանայք:

Մաղթում եմ ձեզ երջանկություն անձնական կյանքում եւ հաջողություններ՝ աշխատանքային գործունեության մեջ»:

ԴԱՀՃԻ ՓՈԽԱՐԵՆ ԶՈՀՆ Է ԴԵՌ ԴԱՏՎՈՒՄ

Ուղիղ 37 տարի առաջ այս օրերին Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում սոսկալի ու նողկալի եղեռն էր իրականացվում տեղի հայ անմեղ ընտանիքների նկատմամբ: Ադրբեջանական գազազած ամբոխը մարդկանց հոշոտում էր ամենավայրագ ձեւերով՝ չխնայելով անգամ ծերերին, կանանց ու երեխաներին՝ այդպես դրսեւորելով իրենց «հայրենասիրությունն» ու «տղամարդկությունը»:

Արնախում բորենիները մարդկանց ենթարկում էին սոսկալի կտտանքների, կտրատում, այրում խարույկի վրա: Ու այդ ամենը տեղի էր ունենում օրենքի պահապանների ու իշխանությունների բացարձակ թողտվությամբ:

ԽՍՀՄ կառավարարությունը մի քանի կիսատ-պռատ դատեր արեց, սակայն Սումգայիթի ոճրագործները հիմնականում մնացին անպատիժ, հերոսացան յուսայինների աչքերում ու խրախուսվեցին ադրբեջանական կառավարության որոշումներում, որոնց շարքերին հետագայում միացավ նաեւ քնած հայ սպային կացնահարած Ռամիլ Սաֆարովը:

Հետո Սումգայիթի գազանություններն անարգել տարածվեցին Գանձակում, Բաքվում, Նախիջեւանում, Ադրբեջանի հայաբնակ այլ վայրերում: Հետո ադրբեջանական զինված կազմավորումները ԽՍՀՄ բանակի հետ համատեղ սկսեցին հայաթափել Արցախի բնակավայրերը: Հետո, երբ արդեն պատմության թատերաբեմից չքվեց ԽՍՀՄ-ը, Ադրբեջանը մեծ բանակով եկավ Արցախ՝ բացահայտորեն բնաջնջելու հայ բնակչությանը ու այդպես լուծում տալու Արցախյան հարցին:

Բոլորս գիտենք, թե դրա դիմաց արյան ինչպիսի գին վճարեց Ադրբեջանը ու ջախջախված գայլի դնչով որքան ժամանակ արդարություն աղերսեց միջազգային ատյաններից: Նա գիտեր ու բոլորից շատ լավ գիտի մեղքի իր բաժինը, իր գազանությունների գինը: Պարզապես այդ ամենը ժամանակին անում էր՝ զոհի կերպարանք ընդունելու նպատակով, որպեսզի այդուհետ պատրաստ լինի՝ ավելի ծավալուն սպանդ հայ ժողովրդի նկատմամբ իրականացնելու նպատակով: Նա նաեւ շատ լավ գիտեր, որ միայնակ չի կարողանալու ծնկի բերել հայ ժողովրդին, ուստի գտավ միջազգային նոր հանցագործ ու մարդասպան տերությունների՝ նրանց ներգրավելով հայասպանության գործում:

Իսկ ահա Սումգայիթյան եղեռնագործությունից 37 տարի անց Բաքվում դատվում են Արցախի ռազմաքաղաքական ղեկավարները, մարդիկ, ովքեր տասնամյակներ շարունակ գլխավորել են հայ ժողովրդի ազատագրական պայքարն ընդդեմ թուրանաադրբեջանակ բռնատիրության, ընդդեմ ցեղասպանության ու հանուն ազատ ապրելու իրավունքի:

Մենք էլ լավ գիտենք, աշխարհն էլ լավ գիտի, որ սա դատ չէ, դատավարություն չէ, այլ ընդամենը տնազ ու ծաղր է Արդարադատության, միջազգային իրավունքի նկատմամբ, որ իրականում դահիճները շարունակում են դատել իրենց զոհերին:

Ո՞վ է կասկածում, որ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության ներկայացուցիչները Բաքվի բանտում գրեթե անդադար ենթարկվում են անասելի կտտանքների ու խոշտանգումների, ծաղրի ու անարգանքի, իսկ այդ դատավարությունները լոկ կրկեսային բեմականացումներ են, որպեսզի աշխարհի բոլոր մարդիկ, աշխարհի ճակատագիրը տնօրինող մեծ տերություններն ու միջազգային կառույցները համոզվեն, թե որքան «մարդասեր», «խաղաղասեր», «արդար» կառավարություն ու ժողովուրդ ունի Ադրբեջանը:

Ցավալի է, իհարկե, որ մերօրյա աշխարհին անգամ այսքան լռելյայն է տանում մարդկային այս ստորությունը, սակայն միանգամայն հասկանալի է, որ մեծ տերությունները, ընդ որում՝ քրիստոնեական արժեքներ դավանող մեծ տերությունները, շարունակում են համընդհանուր շահեր ունենալ մարդասպան ու ոճրագործ մի տերության հետ, որտեղ շատ լավ են տիրապետում մարդ հոշոտելու արհեստին, առավել եւս՝ հայ քրիստոնյա հոշոտելու ավանդույթներին: Ու, հանուն այդ շահերի, ոչ միայն լռում են, այլ նաեւ դարձել են կեղծավոր ու քսու հանդիսատեսներ, ճիշտ այնպես, ինչպես որ էին Արցախին ծանր պատերազմի մեջ ներքաշելու, Արցախը հայաթափելու, 150 հազար մարդու միանգամից հայրենազրկելու ժամանակ:

Ահա սա է այսօրվա միջազգային արդարադատությունը, որից ոչ մի ակնկալիք չունենք ազգովի, սակայն շատ լուրջ դասեր ունենք սովորելու, որպեզի մի գեղեցիկ օր կարողանանք հասնել մեր պատկերացրած, մեր երազած, մեր իսկ ձեռքերով նվաճված Արդարադատությանը:

Խոսրով Խլղաթյան

5.qxd 18/03/2025 11:41 Page 2

ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՀԵՐՈՍԱՑԱԾ ԳԵՆԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԱՃՅՈՒՆԸ ՀՈՂԻՆ Է ՀԱՆՁՆՎԵԼ «ԵՌԱԲԼՈՒՐ» ՊԱՆԹԵՈՆՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի բնակիչ, Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված Գենադի Մնացականյանի աճյունը 2025 թվականի մարտի 3-ին հողին է հանձնվել «Եռաբլուր» պանթեոնում:

Գենադիի ընտանիքը բնակվել է Մոսկվայում, իսկ ինքը գերադասել է գալ ու ծառայել Հայոց բանակում: Երբ սկսվել է Արցախյան 44-օրյա պատերազմը, Գենադին արդեն 8 ամսվա զինծառայող է եղել: Ծառայել է Վայքի զորամասում: Անհետ կորած է համարվել 2020 թվականի հոկտեմբերի 7-ից: 4 տարի շարունակ նրա ծնողները սպասել են ԴՆԹ պատասխանի, ինչը, ցավոք, հաստատվել է վերջերս:

44 օր մենք ապրեցինք՝ մարտահրավեր նետելով մահին, 44 օր մեր զավակները նայեցին մահվան աչքերի մեջ ու հաղթեցին մահին:

Պատերազմի ընթացքում ու դրանցի հետո էլ Սեւանը քանի անգամ կուչ եկավ ցավից. մահաբեր աշունը խլեց մեզանից մեր գարունները, տարավ մեր ծիլ տղաներին, մեր լույսն ու ապագան:

Ցավը բռունցքվել ու դարձել է հիշողություն, ցավը ճաք է տվել, որ ծորում է մինչ օրս:

Սեւանցի ժամկետային զինծառայող Գենադի Մնացականյանն էլ, որ մեկնել էր հայրենիքի հանդեպ իր պարտքը կատարելու, որին բանակ էին ճանապարհել օրհնանքների տարափով, դարձավ 44-օրյա պատերազմի հերոսներից մեկը, որի տունդարձի ճանապարհը երկարեց՝ ձգվելով դեպի անմահություն:

Տարիներ դարձած մաշող օրերից յուրաքանչյուրը լի էր հավատով, աղոթքներով, հրաշքի սպասումով:

Գենադիի ծնողները փորձում էին չկոտրվել ու չնահանջել, իրենց լավատեսությամբ վարակում էին նաեւ շրջապատին...: Ու սպասում էինք, սպասում հրաշքի:

Ավաղ, այս անգամ էլ հրաշք չեղավ, ու մեր հերոսին՝ Գենադի Մնացականյանին, սեւանցիները Եռագույնով ճանապարհում են դեպի անմահություն, ու վերջին հանգրվանն էլ Եռաբլուրն է:

Սեւանցիները սեր ու կրակ են հանձնում մայր հողին ու մտովի երդվում՝ թեւ տալ մեր լուսավոր տղայի երազանքներին, ապրեցնել նրան՝ կերտելով ուժեղ ու հզոր հայրենիք:

Հավերժ փառք մեր հերոս զավակին, խոնարհում մեր անմահ հերոսի հիշատակի առաջ:

Արմինե Ղուկասյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԱՄՍՅԱԿԸ

Գավառ քաղաքի Լ. Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնում Կանաց տոնի օրը տրվել է թատերական երկամսյակի մեկնարկը:

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի նախաձեռնությամբ արդեն երրորդ տարին է, ինչ Գեղարքունիքի մարզում մարտ- ապրիլ ամիսները հայտարարվում է թատերական երկամսյակի ժամանակահատված: Նախաձեռնությանն աջակցում է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը:

Թատերական երկամսյակի շրջանակներում մարզի Լեւոն Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանների հետ ներկայացումներով հանդես են գալիս նաեւ մայրաքաղաքի եւ հանրապետության տարբեր մարզերի լավագույն թատերական խմբեր:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից ցերեկույթին հրավիրվել են Արցախյան պատերազմներում զոհված զինծառայողների մայրեր, քույրեր, կանայք, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, մարզի կրթամշակութային հաստատությունների եւ համայնքապետարանների կին աշխատակիցներ:

Տոնական ցերեկույթի մեկնարկին մասնակիցներին փոխանցվել է Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորանքի եւ բարեմաղթանքի խոսքը, բաժանվել են ծաղիկներ, ապա Գեղարքունիքի Լեւոն Քալանթարի անվան դրամատիկական թատրոնի դերասանների ուժերով բեմադրվել է Վալենտին Կրասնագորովի «Հիշի՛ր, բժիշկ, հիշի՛ր» ներկայացումը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

Տեղի է ունեցել Գավառ համայնքի ավագանու արտահերթ նիստ, որը վարել է համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը:

Օրակարգի հարցերի հաստատումից հետո «Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ քվեարկության արդյունքում ընտրված առաջարկներին հավանություն տալու մասին» հարցը զեկուցել է համայնքապետարանի գլխավոր մասնագետ, ծրագրերի պատասխանատու Հակոբ Սարգսյանը, «Մասնակցային բյուջետավորման ծրագրի շրջանակներում 2024 թվականին ձեռք բերված ապրանքները հաղթող ծրագրերի պատասխանատուներին հանձնելու մասին» հարցը՝ համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման եւ հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ Լիլիթ Բաբինյանը:

Աշխատակազմի քաղաքաշինության եւ հողաշինության բաժնի պետ Դավիթ Մազմանյանը ներկայացրել է «Համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտնակները ուղղակի վաճառքի միջոցով եւ աճուրդային կարգով օտարելու մասին» հարցը:

Աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության բաժնի պետ Արծրուն Ղուրշուդյանը զեկուցել է «Գավառ համայնքում «Բայազետ սանէներջի» եւ «Սոլարսիներջի» ՍՊԸ-ների կողմից արեւային ֆոտովոլտային կայանների կառուցման աշխատանքների մասին» հարցերը:

Օրակարգում ներառված բոլոր հարցերն ավագանու կողմից հաստատվել են քվեարկությամբ:

Ալվարդ Մանուկյան

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԵԼ Է ԱՐԵՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Մեծաթիվ բնակչությանն ուղղված էխ եւ Վէ բարձր ազդեցությամբ ցուցադրական-պիլոտային միջոցառումներ» ծրագրի շրջանակում Սեւանի համայնքապետարանի վարչական շենքի տանիքին տեղադրվել է 50 կիլովատտ ժամ հզորության արեւային համակարգ:

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էնեգախնայողության հիմնադրամի» եւ Սեւանի համայնքապետարանի համագործակցության արդյունքում՝ ֆինանսավորմամբ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության, իրողություն է դառնում 50 կՎտ արեւային ֆոտովոլտային համակարգի տեղադրումը, որը էներգախնայողությանն ուղղված հիմնարար նախաձեռնություն է:

Ծրագրի իրականացման համար Սեւանի համայնքապետարանի կողմից կատարվել է ծրագրի ընդհանուր արժեքի 20 տոկոսի ներդրում:

Արեւային ֆոտովոլտային համակարգի տեղադրումը կատարվել է «Էկովիլ» ՍՊԸ-ի կողմից:

Արեւային համակարգի տեղադրմանը զուգահեռ համայնքապետարանի վարչական շենքի տանիքում իրականացվել են նաեւ ջերմամեկուսացման աշխատանքներ, որի շնորհիվ էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումները լիովին ծառայելու են իրենց նպատակին:

Օրեր անց համակարգը կգործի, որի արդյունքում հասարակական նշանակության եւս մեկ շենքում կարձանագրվեն էներգիայի խնայողության եւ վերականգնվող էներգիայի օգտագործման տեսանելի ցուցանիշներ:

Արմինե Ղուկասյան

ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՔՆԱՊԵՏԱՐԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ Է ՀԱՏԿԱՑՐԵԼ ԼԱՆՋԱՂԲՅՈՒՐԻ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ

Գավառի համայնքային գրադարանի Լանջաղբյուրի ստարաբաժանումը 2025 թվականի տարեսկզբից իր գործունեությունն իրականացնում է ավելի բարեկարգ պայմաններում:

Լանջաղբյուրի մշակույթի տան երկրորդ հարկում ստեղծվել է գրադարանային գործունեության կազմակերպման եւ ընթերցողների համար առավել տրամադրող միջավայր:

Գավառ համայնքի 2024 թվականի բյուջեից կապիտալ դրամաշնորհով շուրջ 975 հազար դրամ է հատկացվել ստորաբաժանմանը, ինչի արդյունքում նշված գումարով կատարվել է հատակի վերանորոգում, ձեռք է բերվել համակարգիչ եւ տպիչ, լուծվել է նաեւ համացանցային կապի խնդիրը: Կապիտալ դրամաշնորհով համալրվել է նաեւ գրաֆոնդը՝ պահանջվող գրականությամբ: Գրադարանի տնօրեն Սեդա Դանիելյանի հավաստմամբ՝ գրադարանն այժմ ունի վեց հազար գիրք, որոնց թիվը համալրվում է նոր գրքերով:

Գավառի համայնքային գրադարանի Լանջաղբյուրի ստարաբաժանմանը նաեւ ընթացիկ դրամաշնորհ է հատկացվել: 91 հազար դրամով ձեռք են բերվել վարագույրներ քիվերով: Առաջիկայում կլուծվեն նաեւ ջեռուցման, ջրի ու սանհանգույցի խնդիրները:

Ալվարդ Մանուկյան

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼ Է 871 ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔ

2024 թվականի ընթացքում Գեղարքունիքի մարզում գրանցվել է 871 արտակարգ դեպք՝ 2023 թվականի 668 արտակարգ դեպքերի դիմաց, որոնց հետեւանքով զոհվել է 22 մարդ՝ 2023 թվականին գրանցված 49 դեպքերի դիմաց, մարմնական վնասվածքներ են ստացել 94 մարդ՝ 2023 թվականին գրանցված 91 դեպքի դիմաց:

Ինչպես ներկայացուցեց ՀՀ ՆԳ նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային վարչության պետ Գեւորգ Գալստյանը, 2024 թվականին գրանցված 871 արտակարգ դեպքերից 836-ը տեխնածին են, որոնցից 184-ը՝ հրդեհի, 75-ը՝ ճանապարհատրանսպորտային, 389-ը՝ ավտոմեքենաների արգելափակման, 12-ը՝ որոնողական աշխատանքների, 92-ը՝ փակ դռների, 47-ը՝ քաղաքացիներին ցուցաբերած օգնության, 8-ը՝ ապամոնտաժման, 5-ը՝ կենդանիների օգնության, 4-ը՝ պայթյունի, 8-ը՝ օձերի վնասազերծման, 4-ը՝ փլուզման, 2-ը՝ ջրահեղձման, 4-ը՝ զենք-զինամթերքի հայտնաբերման, 1-ը՝ հոսանքահարման, 1-ը՝ ջրալցման դեպքեր:

15 մարդ զոհվել է ճանապարհատրանսպորտային պատահարների, 2 մարդ՝ որոնողական, 2 մարդ՝ ջրահեղձման, 1 մարդ՝ պայթյունի, 1 մարդ՝ էլեկտրահարման, 1-ը՝ կայծակնահարության դեպքերի հետեւանքով:

Գրանցված աղետներից 35-ը տարերային են, որոնց հետեւանքով զոհվել է 1 եւ վիրավորվել 2 մարդ: 2023 թվականի համեմատությամբ 2024 թվականին տարերային բնույթի դեպքերը նվազել են 2-ով:

«Գեղամա աշխարհ»

5.qxd 18/03/2025 11:41 Page 3

ԴԴՄԱՇԵՆԻ ՍՈՒՐԲ ԹԱԴԵՎՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Դդմաշեն գյուղի այցեքարտն իրավամբ համարվում է 7-րդ դարից մեզ հասած եւ ներկայումս կանգուն եկեղեցին:

«Հայաստանի հանրագիտարան»-ում կարդում ենք. «Դդմաշենի արեւելյան կողմում, ոչ մեծ բարձունքի լանջին կանգուն է Ս. Թադեւոս առաքյալ եկեղեցին (7-րդ դար): Կառուցված է եղել մաքուր տաշված դեղնակարմրավուն ֆելզիտ քարից, միջնադարում նորոգվել է կապտավուն բազալտով: Այժմյան գմբեթը կառուցվել է 1907 թվականին: Հուշարձանը պատկանում է հայ ճարտարապետության՝ լայն տարածում գտած «գմբեթավոր դահլիճ» տիպին...»:, (հատոր 3, էջ 321, 1977թ.):

«Բանբեր Երեւանի համալսարանի» ամսագրի 1973 թվականի 1-ին համարի էջ 264-269-ում, Դդմաշենի եկեղեցու մասին Մուրադ Հասրաթյանը գրում է. «Հուշարձանը կառուցված է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Վարաժնունիք գավառում, որը Կոտայքի նման, 6-րդ դարի վերջում եւ 7-րդ դարի սկզբում գտնվել է բյուզանդական կայսրության տիրապետության տակ եւ Ավանի քաղկեդոնիկ կաթողիկոսության ներքո: Նշանակում է՝ Դդմաշենի եկեղեցին կարող էր կառուցվել 603 թվականից հետո, երբ պարսկական զորքերը գրավում են Այրարատը, եւ վերանում է Քաղկեդոնի կաթողիկոսությունը: Հետեւաբար, հուշարձանի թվագրումը 603-630 թվականներով միանգամայն համապատասխանում է կառուցվածքի ճարտարապետական գեղարվեստական առանձնահատկություններին եւ Հայաստանի այդ ժամանակաշրջանի քաղաքական-դավանաբանական իրավիճակին...»:

Դդմաշենի եկեղեցին ունի խաչաձեւ ուղղանկյուն հատակագիծ: Մեկ կոնաձեւ գմբեթը հիմնվում է տասնվեցանիստ թմբուկին, որի վերեւում ութ պատուհան է, որոնց միջոցով լույսը թափանցում է կառույցի ներսը: Թմբուկը երիզող պատուհանների միջեւ ճակատներում կան խորշեր: Աբսիդում (կամար, թաղար) առկա է փոքր պատուհան, իսկ տաս ավելի մեծ պատուհանները լուսավորում են նավը: Եկեղեցու արտաքին ու ներքին տեսքը գրեթե զուրկ է զարդարանքից, պատուհանների վերեւի զոլակները նույնպես զարդարված չեն: Պատուհաններ կան նաեւ աբսիդին կից բոլոր աղոթասենյակներում: Եկեղեցու ներսում տեղադրված է փայտյա գեղազարդ խորան...

Դարեր ի վեր, Դդմաշենի եկեղեցին եղել է տարածաշրջանի դպրության ու գրչության կենտրոններից մեկը, որտեղ Ազարիա սարկավագը եւ Թումայ գրիչը ավետարաններ են գրել, ծաղկվել են մատյաններ, ուսուցանվել հոգեւոր գրքեր, երգեր, կից գործել են հոգեւոր դպրոցներ...

Մինչեւ 1828 թվականին գյուղի վերաբնակեցումը, եկեղեցին հիշատակվում է սուրբ Աստվածածին անունով: Գյուղի նոր բնակիչները 1842 թվականին վերանորոգել են եկեղեցու խոնարհված զանգակատունն ու տանիքը եւ եկեղեցին կոչել սուրբ Թադեւոս, հավանաբար նկատի ունենալով Թադեի վանքը, որի շրջակայքի գյուղերից էլ իրենք գաղթել էին...

Եկեղեցու մասին հիշատակություններ են թողել անցյալի նշանավոր ճարտարապետներն ու ազգագրագետները, հատկապես Հովհաննես արքեպիսկոպոս Շահխաթունյանը, Ղեւոնդ Ալիշանը, Երվանդ Լալայանը, Թորոս Թորամանյանը, Ազարիա սարկավագը, Թումայ գրիչը, Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը եւ ուրիշներ:

19-րդ դարի երկրորդ կեսին եւ մինչեւ գյուղում խորհրդային կարգերի հաստատումը, եկեղեցին գործել է՝ դառնալով նաեւ կրթության, տառաճանաչության ու դպրության կենտրոն, որի մատյաններում արձանագրվել են ծնունդները, հարսանիքները, մահերը, պահպանվել տեղեկություններ գյուղի աշխարհիկ ու կրոնական կյանքից:

Սկսած 1839 թվականից՝ եկեղեցում ծառայել են բազմաթիվ բանիմաց ու գրագետ քահանաներ, սարկավագներ, դպիրներ, երեցփոխներ, ժամհարներ: Նրանց շնորհիվ խնամքով գրվել, կազմվել ու մեզ են հասել չորս հատոր չափաբերական մատյաններ, որոնցից տեղեկանում ենք Դդմաշենի բնակչության շարժի, քաղաքացիական կյանքի, ըստ տարիների ծնունդների, հարսանիքների, մահերի, մկրտողների, կնքահայրերի եւ այլնի մասին: Այդ մատյանները պահվում են ՀՀ պետական կենտրոնական արխիվում:

Եկեղեցու խոնարհված գմբեթը վերջին անգամ նորոգվել է 1907-1909 թվականներին: Այդ մասին առավել տեղեկանում ենք Երեւանի թեմական դպրոցի տեսուչ Տ. Ռաշմաճյանի Դդմաշենի դպրոցին վերաբերվող զեկուցագրից, որում կարդում ենք. «Դպրոցի շենքը վարձու է, վերին աստիճանի հակաառողջապահիկ է, բայց առայժմ բարելավելու հիմքեր չկան: Գյուղն զբաղված է հնություն կազմող եկեղեցու նորոգությամբ, մինչեւ այն չվերջացնեն, դպրոցական շենքի ու նրա ապահովության մասին չեն կարող մտածել...»: Այդ զեկուցագրից դժվար չէ հասկանալ, որ եկեղեցին ու հոգեւոր կյանքը, 20-րդ դարասկզբի դդմաշենցու համար ավելի կարեւոր է եղել, քան բարվոք դպրոց ունենալը:

Խորհրդային շրջանում, ինչպես շատ եկեղեցիներ, 1931 թվականին փակվեց նաեւ Դդմաշենի եկեղեցին, թալանվեցին թավշյա վարագույրը, գրքերը, արծաթյա մոմակալները, երեք մեծ ու փոքր պղնձաձույլ զանգերը, որոնց ղողանջները լսվում էին անգամ հարեւան գյուղերում...

Դդմաշենի վերջին քահանան Տեր Սահակն էր, որին ձերբակալեցին անհատի պաշտամունքի տարիներին, իսկ տիրացուներ՝ էջմիածնի Գեւորգյան ճեմարանի շրջանավարտ Ռուբեն (Կնյազ) Փանոսյանն ու Գեւորգ Տեր-Հովհաննիսյանը զրկվեցին իրենց կոչումից:

1938-1970 թվականներին եկեղեցին օգտագործվել է որպես կոլտնտեսության պահեստ: Մինչեւ 70-ական թվականների վերջը, եկեղեցու տարածքում գործում էր փայտամշակման արհեստանոց: Հրազդան գետի նորակառույց կամուրջին միացվող նոր ճանապարհը կառուցելիս, որն անցնում էր եկեղեցու պարսպի հարեւանությամբ, պատահաբար բացվեցին երկու հորեր, որոնք 19-րդ դարի շինվածք էին ու ծառայել էին որպես ցորենի պահեստարաններ:

1975-76 թվականներին եկեղեցու գմբեթը վերակառուցվեց ու թիթեղապատվեց, դրվեց խաչը, որը պատրաստվեց Գագարինի շինարարական խոշոր մեքենաների վերանորոգման գործարանում՝ հորս ու Վալոդ քեռուս ձեռքերով:

1990 թվականից, եղբորս՝ Դդմաշենի գյուղապետ Հուսիկ Ենոքյանի ակտիվ ջանքերով, եկեղեցին կրկին սկսեց գործել: Երկու տարի քահանան էր Վազգեն Տալյանի որդին՝ Տեր Կյուրեղը: Նրա հեռանալուց հետո, եկեղեցու դռները կրկին փակվեցին, տասնամյակ անց, այն նորից վերաբացվեց, ձեռներեց դդմաշենցիների շնորհիվ որոշ վերանորոգումներ արվեցին, դահլիճն ու խորանը կահավորվեց, ակտիվացավ հավատացյալների հաճախելիությունը, մոմավառությունը, աճեց եկեղեցու հետաքրքրությունը՝ որպես պատմական կրոնական հուշարձանի: Հաճախակի այնտեղ նաեւ ննջեցյալների հոգեհանգստի արարողություն եւ կրոնական բովանդակությամբ այլ միջոցառումներ էին կազմակերպվում, բայց մշտական հոգեւոր հովիվ չունենալու պատճառով այն մնացել է միայն պատմական հուշարձան, ու հատկապես գմբեթային տանիքն արդեն շարքից դուրս է եկել:

Դարերից եկած եկեղեցին դարերին թողնելու համար, սակայն, լուրջ ներդրումներ են հարկավոր ու հոգատար ձեռքեր:

Գոռ Ենոքյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պատանիների շախմատի առաջնության կիսաեզրափակիչ մրցումներին մարզի մասնակցությունն ապահովելու նպատակով ամեն տարի անցկացվում է Գեղարքունիքի մարզի մինչեւ 8, 10, 12, 14 եւ 16 տարեկան պատանիների շախմատի մարզային առաջնություն:

2025 թվականի շախմատի պատանիների առաջնությունն անցկացվել է երկու փուլով՝ համայնքային եւ մարզային: Համայնքային փուլի մրցումներն անցկացվել են 2025 թվականի փետրվարի 15-24-ը՝ Հայաստանի շախմատի ակադեմիայի Գավառի, Սեւանի, Ճամբարակի, Մարտունու, Սարուխանի, Վարդենիսի եւ Վարդենիկի մասնաճյուղերում:

Մարտի 1-ին, 2-ին եւ 9-ին Գավառի Պապին Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում կայացել է առաջնության մարզային փուլը, որին մասնակցել են համայնքային փուլի արդյունքում ձեւավորված թիմերը: Թիմերն ըստ տարիքային խմբերի ձեւավորվել էին հետեւյալ համամասնությամբ՝ մինչեւ 8 տարեկան՝ 1 տղա, մինչեւ 10 տարեկաններ՝ 3 տղա, մինչեւ 12 տարեկաններ՝ 3 տղա, մինչեւ 14 տարեկաններ՝ 3 տղա, մինչեւ 16 տարեկաններ՝ 2 տղա: Ընդ որում՝ մինչ 10 տարեկան պատանիների մրցաշարում մասնակցության իրավունք ունեին առնվազն 3-րդ կարգ ունեցող, մինչ 12, 14 եւ 16 տարեկան պատանիների մրցաշարում՝ առնվազն 2-րդ կարգ ունեցող շախմատիստները: Ընդհանուր առմամբ՝ մարզային փուլին մասնակցել են 80 պատանի շախմատիստներ:

Առաջնությունն անցկացվել է ՖԻԴԵ-ի կանոնակարգի դասական շախմատի կանոնների համաձայն, անհատական կարգով: Յուրաքանչյուր խաղացողին մեկ խաղափուլում տրվել է 60 րոպե ժամանակ՝ յուրաքանչյուր քայլի համար 5 վայրկյան հավելումով:

Առաջնության մարզային փուլի գլխավոր մրցավարն էր Հայաստանի շախմատի ակադեմիայի ներկայացուցիչ Մերուժան Հայրապետյանը, քարտուղարը՝ Կարո Սարգսյանը: Մարզային փուլում մինչեւ 8 եւ 16 տարեկանների տարիքային խմբերում մրցումներն անցկացվել են շրջանաձեւ մրցակարգով, իսկ մինչեւ 10, 12 եւ 14 տարեկանների տարիքային խմբերում՝ շվեյցարական մրցակարգով:

Մինչեւ 8 տարեկանների մրցապայքարում 1-ին տեղը գրավել է Արման Մանուկյանը (Գավառ), 2-րդ հորիզոնականը՝ Դավիթ Սարիբեկյանը (Մարտունի), իսկ 3-րդ հորիզոնականը՝ Վաղարշակ Աղեկյանը (Գավառ):

Մինչեւ 10 տարեկանների տարիքային խմբում ուժեղագույնն էր Ալեքս Մխիթարյանը (Վարդենիս), 2-րդ տեղ էր Արեն Մարգարյանը (Վարդենիկ), իսկ 3-րդ մրցանակային տեղը՝ Ալեն Գրիգորյանը (Վարդենիկ):

Մինչեւ 12 տարեկանների խմբում 1-ին տեղը գրավել է Վաչե Ավդալյանը (Գավառ՝ Սարուխան), 2-րդ տեղը՝ Սաղաթել Թադեւոսյանը (Վարդենիս), իսկ 3-րդ մրցանակային տեղը՝ Սերգեյ Սահակյանը (Ճամբարակ): Այս տարիքային խմբում հաջորդ փուլի մասնակցության իրավունք է ստացել նաեւ Գրիշա Շահումյանը (Մարտունի):

Մինչեւ 14 տարեկանների տարիքային խմբում հաղթող է ճանաչվել Արսեն Մովսիսյանը (Վարդենիկ), 2-րդ տեղը գրավել է Լեւոն Վարդանյանը (Սեւան), 3-րդ տեղը՝ Արամ Ղազարյանը (Մարտունի):

Մինչեւ 16 տարեկանների տարիքային խմբում առաջին հորիզոնականը զբաղեցրել է Ռազմիկ Սիրականյանը (Մարտունի), 2-րդ տեղը՝ Հարություն Մխիթարյանը (Վարդենիկ), 3-րդ մրցանակային տեղը՝ Կարեն Սահակյանը (Ճամբարակ):

Մրցաշարի արդյունքում ձեւավորվել է մարզի հավաքական թիմը, որը Հայաստանի պատանիների շախմատի առաջնության կիսաեզրափակիչ մրցումներին կներկայացնի Գեղարքունիքի մարզը:

Առաջնության մրցանակակիրներին Գեղարքունիքի մարզպետի անունից հանձնվել են հավաստագրեր եւ մեդալներ:

Գեղամ Չարվադարյան

5.qxd 18/03/2025 11:41 Page 4

ՏԵՂԵԿԱՆՔ ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԻՑ

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները եկամուտների տարեկան հայտարարագիր ներկայացնելու եւ եկամտային հարկ ունենալու դեպքում հաշվետու տարվա ընթացքում առողջապահության եւ/կամ կրթության գծով իրենց կողմից կատարված սոցիալական ծախսերի դիմաց կարող են օգտվել փոխհատուցման հնարավորությունից: Հաջորդիվ հարցուպատասխան ձեւաչափով ներկայացվում է սոցիալական ծախսի փոխհատուցումից օգտվելու ընթացակարգը եւ քայլերի հաջորդականությունը:

Կարեւոր է իմանալ.
ՀՀ ռեզիդենտ համարվելու համար ֆիզիկական անձը պետք է հարկային տարվա ընթացքում 183 օր եւ ավելի փաստացի գտնվի Հայաստանում կամ նրա կենսական շահերի կենտրոնը գտնվի Հայաստանում, մասնավորապես, ֆիզիկական անձի ընտանիքը, տունը կամ բնակարանը, մասնագիտական կամ այլ գործունեության հիմնական վայրը պետք է գտնվի Հայաստանում: Ռեզիդենտներ են համարվում նաեւ Հայաստանում պետական ծառայության մեջ գտնվող՝ ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող անձինք:

ՈՎՔԵ՞Ր ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏՎԵԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱԽՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԻՑ

Եթե Դուք ՀՀ ռեզիդենտ ՀՀ քաղաքացի եք եւ արդեն ներկայացրել եք եկամուտների տարեկան հայտարարագիր, ապա Ձեր եկամտային հարկի գումարից կարող եք օգտվել սոցիալական ծախսի փոխհատուցման հնարավորությունից: Հնարավորությունը գործում է ինչպես Ձեր, այնպես էլ՝ Ձեր ընտանիքի անդամների (ամուսին, ծնողներ եւ զավակներ) համար կատարած սոցիալական ծախսերի դեպքում: Փոխհատուցումից կարող եք օգտվել, եթե հաշվետու տարվա ընթացքում կրթության եւ/կամ առողջապահության գծով կատարել եք սոցիալական ծախսեր:

Ո՞Ր ԴԵՊՔՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՕԳՏՎԵԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԻՑ

Կրթության գծով սոցիալական ծախսերի փոխհատուցումից կարող եք օգտվել հետեւյալ դեպքերում.

1. Հայաստանում գործող նախադպրոցական, տարրական, հիմնական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական) հաստատություններում, ինչպես նաեւ միջին, բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի համար կատարել եք ուսման վճարում: Հիշեք, որ ուսման վճարի փոխհատուցման նպատակով՝ 2025 թվականի փետրվարի 15-ից հետո վճարումները պետք է կատարվեն անկանխիկ եղանակով:
2. Հայաստանում գործող երաժշտական, արվեստի, գեղարվեստի, պարարվեստի դպրոցների, արտադպրոցական կազմակերպությունների, կենտրոնների, մանկապատանեկան մարզադպրոցների եւ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից երաշխավորված այլ արտադպրոցական ծրագրերի միջոցով տրամադրվող կրթական ծառայությունների համար անկանխիկ եղանակով կատարել եք ուսման վճարում:
3. Կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից երաշխավորված ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով տրամադրվող կրթական ծառայությունների համար անկանխիկ եղանակով կատարել եք ուսման վճարում:
4. Միջնակարգ (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) կրթության շրջանակում դասագրքերի վարձակալության համար կատարել եք վճարում: Այս դեպքում վճարումները կարող են կատարվել կանխիկ եղանակով, քանի որ դասագրքերի վարձակալության դեպքում վճարում կատարված լինելու հանգամանքը հաշվի չի առնվում: Դասագրքերի վարձակալության գծով ծախսերի փոխհատուցման առավելագույն չափը յուրաքանչյուր աշակերտի համար տարեկան կազմում է 3000 դրամ: Համապատասխան կազմակերպությունների եւ ծրագրերի ցանկը հասանելի է ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքէջում:

Կարեւոր է իմանալ.
Նույն անձի համար կատարված սոցիալական ծախսերի փոխհատուցման հնարավորությունից կարող են օգտվել ընտանիքի հայտարարատու հանդիսացող մի քանի անդամ: Օրինակ, եթե ուսումնական տարվա մեկ կիսամյակի համար ուսման գծով ծախսը կատարել է մայրը, իսկ մյուս կիսամյակի համար՝ հայրը, ապա երկուսն էլ, միաժամանակ, կարող են ստանալ փոխհատուցում: Այս դեպքում կարեւոր է՝ որպես սոցիալական ծախս կատարող հաշվարկային
փաստաթուղթը դուրս գրված լինի յուրաքանչյուրի հանրային ծառայությունների համարանիշով՝ առանձին-առանձին:

ԻՆՉՊԵՍ ՊԱՐԶԵԼ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԼԻՆԵԼԸ

Պարզելու համար՝ արդյոք արտադպրոցական կամ ոչ ֆորմալ կրթական ծրագիրը, որից Դուք օգտվել եք, երաշխավորված է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից, թե՝ ոչ, այցելեք ԿԳՄՍՆ www.escs.am պաշտոնական կայքէջ, ապա մուտք գործեք «Սոցիալական կրեդիտ» բաժին եւ ծանոթացեք երաշխավորված ծրագրերի ցանկին, որոնք պարբերաբար լրացվում են՝ նոր երաշխավորվող ծրագրերին զուգընթաց:

Կարեւոր է իմանալ.
2024 թվականի ընթացքում արտադպրոցական եւ ոչ ֆորմալ կրթական ծրագրերի դիմաց կատարված վճարումները կփոխհատուցվեն, եթե այդ կրթական ծրագրերը երաշխավորվեն մինչեւ Ձեր կողմից հայտարարագրի (այդ թվում՝ ճշտված) ներկայացումը: Իսկ հետագա հաշվետու տարիների ընթացքում կատարված վճարումները կփոխհատուցվեն, եթե կրթական ծրագրերը երաշխավորված լինեն հաշվարկային փաստաթղթի դուրսգրման ամսաթվի դրությամբ:

Ո՞Ր ԴԵՊՔՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՕԳՏՎԵԼ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԻՑ

Առողջապահության գծով սոցիալական ծախսերի փոխհատուցումից կարող եք օգտվել հետեւյալ դեպքերում.

1. Հայաստանում գործող ապահովագրական որեւէ ընկերությունից՝ Ձեր կամ Ձեր ընտանիքի անդամների համար ձեռք եք բերել առողջության ապահովագրական փաթեթ եւ դրա դիմաց կատարել եք վճարում: Հիշեք, որ ապահովագրական փաթեթի ձեռքբերման ծախսի փոխհատուցման նպատակով՝ 2025 թվականի փետրվարի 15-ից հետո վճարումները պետք է կատարվեն անկանխիկ եղանակով:
2. Հայաստանում ատամնաբուժական ծառայությունների համար 2024 եւ 2025 հաշվետու տարիների ընթացքում անկանխիկ եղանակով կատարել եք վճարում:

Կարեւոր է իմանալ.
Սոցիալական փաթեթի շահառուներն առողջության ապահովագրական փաթեթի դեպքում սոցիալական ծախսի փոխհատուցումից կարող են օգտվել միայն ընտանիքի անդամների համար, իսկ ատամնաբուժական ծառայությունների դեպքում կարող են օգտվել նաեւ իրենց համար կատարված ծախսերի դեպքում:

ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԸ

Առողջապահության գծով սոցիալական ծախսի առավելագույն չափը տարեկան 50.000 դրամ է, իսկ կրթության գծով՝ տարեկան առավելագույնը՝ 100.000 դրամ:

Անհրաժեշտ է հիշել, որ Ձեր եւ Ձեր ընտանիքի անդամների համար կատարված բոլոր ուղղություններով սոցիալական ծախսերի փոխհատուցման առավելագույնը չափը կազմում է տարեկան 100.000 դրամ:

Այսինքն, եթե Դուք ուսման վճարի համար ստանաք 100.000 դրամ փոխհատուցում, ապա չեք կարող այլեւս օգտվել առողջության ապահովագրական փաթեթի 50.000 դրամ փոխհատուցումից: Երկու ուղղություններով փոխհատուցումից միաժամանակ կարող եք օգտվել, եթե դրանց հանրագումարը չգերազանցի 100.000 դրամը:

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱԽՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԻՑ

Կրթության եւ առողջապահության գծով սոցիալական ծախսի փոխհատուցումից օգտվելու համար անհրաժեշտ է իրականացնել հաջորդիվ ներկայացվող քայլերը:

ՔԱՅԼ ԱՌԱՋԻՆ՝ ՊԱՀԱՆՋԵԼ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Սոցիալական ծախսի փոխհատուցումից օգտվելու համար անհրաժեշտ է սոցիալական ծախս կատարելիս՝ ծառայություն մատուցողից, այսինքն՝ ապահովագրական ընկերությունից, ատամնաբուժական ծառայություն մատուցողից կամ կրթական հաստատությունից պարտադիր պահանջել Ձեր տվյալներով հաշվարկային փաստաթուղթ (ինվոյս), որը դուրս գրելուց հետո ինքնաշխատ կարտացոլվի հայտարարագրման համակարգում:

Բացառություն են կազմում դասագրքերի վարձակալության համար կատարված վճարները, որոնց դեպքում հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու անհրաժեշտություն չկա, քանի որ հիմք է ընդունվում ԿԳՄՍ նախարարության կողմից հարկային մարմնին տրամադրված՝ աշակերտների եւ նրանց ծնողների վերաբերյալ տեղեկատվությունը (անուն, ազգանուն, ՀԾՀ):

Հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու նպատակով ծառայություն մատուցողին անհրաժեշտ է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ եւ հանրային ծառայությունների համարանիշ: Իսկ այն դեպքում, երբ հայտարարատուն Դուք եք, բայց սոցիալական ծախսը կատարում եք Ձեր ընտանիքի անդամի համար, ապա պետք է ներկայացնեք նաեւ ընտանիքի անդամի անձը հաստատող փաստաթուղթը եւ հանրային ծառայությունների համարանիշը, ինչպես նաեւ ընտանիքի անդամ հանդիսանալու փաստը հիմնավորող փաստաթղթերը (ամուսնու դեպքում՝ ամուսնության վկայական, ծնողի դեպքում՝ ծնողի՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ հայտարարատուի ծննդյան վկայական, զավակի դեպքում՝ ծննդյան վկայական, որդեգրողի, որդեգրվածի դեպքում՝ որդեգրելու կամ որդեգրվելու համապատասխան հիմքը հաստատող փաստաթուղթ):

Կարեւոր է իմանալ.
Եթե 2024 թվականի հաշվետու տարվա համար՝ 2025 թվականին ֆիզիկական անձը պետք է ներկայացնի հայտարարագիր եւ 2024 թվականի ընթացքում կատարել է սոցիալական ծախս, սակայն չունի հաշվարկային փաստաթուղթ, ապա կատարված սոցիալական ծախսը հիմնավորելու եւ փոխհատուցում ստանալու համար ծառայություն մատուցողից կարող է պահանջել դուրս գրել հաշվարկային փաստաթուղթ:

ՔԱՅԼ ԵՐԿՐՈՐԴ՝ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԴԻՄՈՒՄ եւ ՍՏԱՆԱԼ ԳՈՒՄԱՐԸ

Ներկայացնել դիմում եւ ստանալ գումարը եկամուտների տարեկան հայտարարագիրը ներկայացնելուց հետո, հենց նույն համակարգի միջոցով, որով ներկայացրել եք տարեկան հայտարարագիրը, կարող եք դիմել եւ հետ ստանալ սոցիալական ծախսի համար վճարված գումարները՝ հետեւյալ քայլերի հաջորդականությամբ.

1. Մուտք գործեք Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ, ապա գլխավոր էջից անցնելով «Հարկերի մարում/վերադարձ» բաժին՝ «Սոցիալական ծախսեր» պատուհանում կտեսնեք, թե որքան է կազմում վերադարձման ենթակա գումարը: Ի դեպ, համակարգ կարող եք մուտք գործել, ինչպես վեբ տարբերակով, այնպես էլ՝ Self Portal բջջային հավելվածի միջոցով, որը հասանելի է՝ Apple App Store-ում՝ iOS-ի համար եւ Google Play Store-ում՝ Android-ի համար:
2. Վերադարձեք համակարգի գլխավոր էջ եւ մուտք գործեք «Հայտարարագրեր» բաժին, ապա «Հայտարարագրերի ձեւեր»-ից ընտրեք «Դիմում՝ միասնական հաշվից գումարները վերադարձնելու համար» դիմումի ձեւը:
3. Դիմումի համար բացված պատուհանում լրացրեք բանկային հաշվեհամարը եւ փոխհատուցման ենթակա գումարի չափը: Հաշվեհամարը լրացնելուց հետո բանկի անվանումը կլրացվի ինքնաշխատ: Դիմումը գրանցելու համար սեղմեք «Գրանցել» կոճակը:
4. Դիմումը գրանցելուց հետո կբացվի պատուհան, որտեղ անհրաժեշտ է սեղմել «Մարում/վերադարձ» կոճակը: Սեղմելով այս կոճակը՝ Դուք համաձայնվում եք, որ տվյալ օրվա ավարտից հետո վերադարձ կատարվի Ձեր միասնական հաշվին:
5. Գրանցված դիմումը հայտնվում է գլխավոր էջի «Լրացված հայտարարագրեր» բաժնում: Վերջին քայլով պետք է սեղմել ստորագրել կոճակը, ընտրել ստորագրության տեսակը եւ էլեկտրոնային տարբերակով ստորագրել դիմումը, ապա սեղմել «Հանձնել ՊԵԿ» կոճակը:

Դիմումն ուղարկելուց հետո սոցիալական ծախսի գումարը Ձեր նշած հաշվեհամարին կփոխանցվի դիմումը ներկայացնելուց հետո՝ մինչեւ երրորդ աշխատանքային օրը:

Կարեւոր է իմանալ.
Եթե հայտարարագիր ներկայացնող ֆիզիկական անձն օգտվում է հիփոթեքային վարկի կամ ուսման վարձի կամ շահաբաժնի մասով եկամտային հարկի վերադարձի հնարավորությունից, ապա սոցիալական ծախսի փոխհատուցում կկատարվի այն դեպքում, երբ հաշվետու տարվա համար հաշվարկված եւ/կամ վճարված (այդ թվում՝ հարկային գործակալի կողմից) եկամտային հարկի գումարների եւ Հարկային օրենսգրքով սահմանված դեպքերում ֆիզիկական անձին վերադարձված եկամտային հարկի գումարների միջեւ առկա է դրական տարբերություն:

Օրինակ, եթե Ձեր տարեկան եկամտային հարկը կազմել է 800 000 դրամ եւ տարվա ընթացքում հիփոթեքային վարկի մասով Ձեզ վերադարձվել է 650 000 դրամ եկամտային հարկ, ապա կարող եք օգտվել սոցիալական ծախսի փոխհատուցումից՝ առավելագույնը 100 000 դրամի չափով, քանի որ գումարների տարբերությունը դրական է եւ մնացորդը կազմում է 150 000 դրամ: Մեկ այլ դեպքում, եթե Ձեզ վերադարձվել է 770 000 դրամ, ապա Ձեր սոցիալական ծախսի փոխհատուցումը կկազմի 30 000 դրամ, քանի որ գումարների դրական տարբերությունն այդքան է: Իսկ չեք կարող օգտվել, եթե եկամտային հարկն ամբողջությամբ Ձեզ է վերադարձվել, հետեւաբար չկա մնացորդ:

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ՝

ՀՀ Կառավարության 29 հունիսի, 2023 թվականի N 1067-Ն որոշում

ՀՀ Կառավարության 16 հունիսի, 2023 թվականի N 956-Ն որոշում

ՀՀ Կառավարության 13 փետրվարի, 2025 թվականի N 157-Ն որոշում

5.qxd 18/03/2025 11:41 Page 5

ԴՈՒՆՈՒՇԸ

/սկիզբը՝ նախորդ համարում/

1945 թվականի մայիսի իննին էր, արտակարգ ջինջ երկնքով արեւոտ մի օր, որն սկսվել էր սովորականի պես: Օրվա երկրորդ կեսին մարդիկ նկատեցին, որ պիոներական փողկապով ու մաքուր հագուստներով մի աղջիկ խրտնած եղնիկի նման վազում էր գյուղի փողոցներով ու ճղալով բացականչում՝ հաղթանա՜կ, հաղթանա՜կ...

Աղջկա արագ վազքն ու ուրախ տրամադրությունը գրավում էր թե՛ մեծերին, թե՛ փոքրերին: Երկար վազելուց ու բղավելուց նրա շունչը կտրվել էր, դեմքը քրտնել, կուրծքը թպրտում էր ու հաղորդում.«Հաղթանա՜կ, հաղթանա՜կ, պատերազմը վերջացավ»: Դա Ռեմիրա Զարգարյանն էր՝ Հովհաննես եւ Սուսաննա Զարգարյանների աղջիկը, որը սովորում էր յոթերորդ դասարանում եւ համարվում էր առաջնակարգ սովորող: Նա մի քանի րոպե առաջ ծնողներից լսել էր, որ սովետական զորքերը գրավել են Բեռլինը, Ֆաշիստական Գերմանիան անձնատուր է եղել եւ պատերազմը վերջացել է: Նա ծնողների գիտությամբ վազում էր փողոցից փողոց ու մարդկանց հողորդում ամենաուրախալի լուրը: Լսողները վազում էին շրջսովետի գործկոմի շենքի հրապարակը: Այնտեղ հավաքված մարդկանց աղմուկ–աղաղակն ու ճիչերը խառնվում էին դհոլ ու զուռնայի ձայնին եւ հանդիսավորությամբ պատռում պատերազմական տարիների տխրության քողը: Ծովացած ուրախության հեւեւանքով շատերը համբուրում էին իրար, շատերը գլուխկոնծի էին տալիս, շատերն էլ թռչում միմյանց շալակ: Այդտեղ միայն կարելի էր հասկանալ ժողովրդական ուրախության էությունը, պատկերացնել նրա խորությունն ու ծալքերը:

Երիտասարդների հետ հրապարակում էին հավաքվում ծեր տղամարդիկ, պառավ կանայք, հենակավոր վիրավորներ, մայրեր ու երեխաներ: Այնտեղ հայտնվեցին նաեւ Դունուշն ու Ռափոն: Դհոլ ու զուռնայի նվագի տակ պարում էին գրեթե բոլորը: Պարում էին կանայք, տղամարդիկ, երիտասարդ տղաներ ու աղջիկներ: Համաժողովրդական ուրախությունը համակեց նաեւ Դունուշին ու Ռափոյին: Նրանք եւս սկսեցին պարել, որը շատերի համար անհավատալի էր թվում: Իրոք, ո՞վ կհավատար, որ սգավոր Դունուշն ու Ռափոն պարեն, ո՞վ կհավատար, որ նրանց ձեռքերը վեր կբարձրանան եւ պարային նազանքներ կանեն: Ոչ ոք չէր հավատում դրան: Սակայն Դունուշն ու Ռափոն պարում էին եւ ուրախանում ուրիշների նման: Այստեղ սովորական դատողությունը չէր, որ նրանց պետք է հաներ պարելու: Այստեղ հանդես էր գալիս ամենազոր մի ուժ, մի կենսալից բռնկում, որից չէր կարող խուսափել ոչ մեկը: Դա հայրենիքի նկատմամբ բոցավառված սիրոտ բռնկումն էր, որ համակեց Դունուշին եւ Ռափոյին: Մի քանի տարիներ սգավորի ծոցը դրած ձեռքերը վեր բարձրացան ու պարեցին, պարեցին ու պարեցին:

Փառավոր հաղթանակից կարճ ժամանակ հետո սկսեցին զորացրվել լիաբուռն վաստակած զինվորները: Ամիսներ շարունակ չկար այնպիսի օր, որ Հիտլերի հորդաների դեմ կռվողներից մեկնումեկը տուն չգար: Այդպիսով, գյուղից բանակ զորակոչված հինգ հարյուր վեց հայրենասերներից իրենց գերդաստանին արժանացան նրանք, ում բախտ էր վիճակվել՝ կենդանի մնալ: Նրանցից չվերադարձան հարյուր քառասունվեցը, որոնք հերոսաբար զոհվել էին հանուն հայրենիքի:

Տուն վերադարձավ նաեւ Համո Հարությունյանը, այն մարդը, ով ականատես էր եղել Ադոյի դավաճանություններին: Բոլորին շատ էր հետաքրքրում Համոյին հանդիպելն ու նրա հետ խոսելը: Շատ էին ուզում, որ Համոն պատմեր Ադոյի դավաճանությունների մասին: Մտերիմ զրույցներից մարդիկ համոզվեցին, որ Ադոն մարդկանց խորտակման գործում աններելի հանցագործ է եղել նաեւ բանակում ծառայելու ժամանակ. նա կամովին անցել է ֆաշիստների կողմը եւ ծառայել նրանց համար: Նա դավաճանաբար հիտլերականների ձեռքով սպանել էր տվել համագյուղացիներից երկուսին /Հ–ին եւ Ա–ին/: Այդ քայլին է դիմել երեւի այն բանի համար, որ իր դավաճանության մասին վկայողներ չլինեն: Սակայն, ինչպես ժողովուրդն է ասում, Աստված մի դուռը կդնի, մյուսը՝ կբացի: Խիզախ պարտիզան Համոն պատռեց դավաճանի դիմակը եւ համագյուղացիներին հաղորդեց ճշմարտությունը: Բազմաթիվ մարդիկ ատամ էին կրճտացնում նրա վրա եւ «ախ, թե ձեռքս կընկնի» վրիժառությամբ սպասում նրան: Վրիժառության ցասումն այրում էր նաեւ Դունուշին ու Ռափոյին: Նրանք պատրաստ էին՝ առաջին հանդիպման պահին հարձակվել դավաճան Ադոյի վրա եւ ծվատել նրան: Երբ խոսք էր բացվում այդ ապիրատ մարդու մասին, նորանում էին Դունուշի ու Ռափոյի վերքերը՝ սաստկացնելով վրիժառության ցասումը:

Իսկ ի՞նչ էր կատարվել Ադոյի հետ: Հայտնի է, որ սովետական բանակը, Ֆաշիստական Գերմանիայի տարածքը գրավելիս, առաջին հերթին ազատագրում էր սովետական գերիներին: Գերիների հետ ազատագրվել էր նաեւ Ադոն եւ տեղեփոխվել հայրենիք: Նրան հաջողվել էր հայրենասեր գերիների նման ձեռք բերել իրեն հարկավոր փաստաթղթեր եւ ցույց տալ, որ գերության մեջ ինքը կապ է ունեցել Սովետական պարտիզանների հետ եւ օգտակար գործեր կատարել նրանց համար: Իրոք, գերիների մեջ եղել էին այդպիսի մարդիկ, եւ նրանց թիվը քիչ չէր: Ճարպիկ Ադոն կարողացել էր ձեւանալ այդ մարդկանցից մեկը եւ ձեռք բերել համապատասխան փաստաթղթեր ու ճանաչվել սովետական զինվոր: Նման դեպքում հեշտ է ձեռք բերել հաղթանակ տարած մարդկանց մեծահոգությունը եւ օգտագործել իր նպատակների համար: Նա ամիսներ ծառայել էր Սովետական բանակի առանձին զորամասներից մեկում եւ պետք է զորացրվեր ու տուն գնար:

Շատեր հետ զորացրվեց նաեւ Ադոն: Զինվորական շրջանային կոմիսարիատին ներկայացվող նրա փաստաթղթում նշված էր, որ նա երկար ժամանակ եղել է գերության մեջ եւ ազատագրվել է սովետական բանակի կողմից: Այդ հանգամանքը շատ էր մտահոգում նրան: Ի՞նչ երեսով մտնել գյուղը, ի՞նչ երեսով նայել համագյուղացիներին: Նա համոզված էր, որ իր գյուղի բնակիչներից բազմաթիվ մարդիկ զոհվել են հանուն հայրենիքի եւ հազարավոր խիզախներ էլ տուն են վերադարձել շքանշաններով ու մեդալներով՝ կառավարական բարձր պարգեւներով ու հաղթողի փառքով: Իսկ ինքը՞...

Բացի դրանից՝ նա սարսափով էր մտածում այն մասին, որ գերմանական ճամբարում իր արարքները տեսել են շատերը, որոնք կարող են պատռել դավաճանի իր դիմակը: Սարսափով էր հիշում ղարաբաղցի Արամային Հովսեփյանի գլխավորությամբ ճամբարից փախած ու պարտիզաններին միացած հայրենասերներին հաշիվ տալու մասին: Մանավանդ այն մասին, որ այդ հայրենասերներից իրեն կարող էր մերկացնել համագյուղացի Համոն, որը Հովսեփյանի ջոկատում ակտիվորեն կռվել էր ֆաշիստների դեմ եւ վաստակել փառք ու պատիվ: Մտածում էր Ադոն, մտածում ու որեւէ օգտակար ելք չէր գտնում: Նրա համար սպանվելն ավելի ձեռնտու էր, քան այդ ձեւով տուն վերադառնալը:

Իրոք, Հայկի, Միշայի, երկրի մասշտաբով, իհարկե, տասնյակ միլիոնավոր զոհվածների տուն չվերադառնալը այնքան ծանր չէր թվում հարազատներին, որքան՝ Ադոյի տուն վերադառնալը: Այդ բանը պատկերացնում էր նաեւ ինքը՝ դավաճան Ադոն: Ախր գերության մեջ լինելը հասկանալի է, հանդուրժելի է, առանձին դեպքում էլ ընդունելի է: Սակայն Ադոն գերի էր հանձնվել դավաճանաբար, այնտեղ ստորաքարշությամբ ծառայել էր ֆաշիստներին, ծեծել ու խոշտանգել էր տվել հայրենակիցներին, սպանել տվել նույնիսկ համագյուղացիներին եւ այժմ կանգնել է գյուղ վերադառնալու ընտրանքի առաջ:

Վերջապես երկար ծանր ու թեթեւ անելուց հետո նա ապավինեց պարտիզանական ջոկատում լինելու վերաբերյալ ձեռք բերած կեղծ փաստաթղթերին ու Սիբիրից գնացքով շարժվեց դեպի Երեւան, որպեսզի այնտեղից էլ գնա իրենց գյուղը: Նրա որոշումը զարմանալի չէր: Երբ մեկը այդքան ստորաբար դավաճանում է հայրենիքին, նա կարող է այդպիսի տվյալներով տուն էլ վերադառնալ, զինկոմիսարիատի աշխատողներին մոլորեցնել կեղծ թղթերով եւ դասվել հայրենիքի համար արյուն թափած զինվորների շարքը: Դա նրա համար այնքան հասարակ բան էր, ինչքան մի բաժակ ջուր խմելը:

Երեւանում նրան հանդիպում է համագյուղացիներից այնպիսի մեկը, որ ադոյենց մոտիկ հարեւանն է, նրանք մանկուց ճանաչում են միմյանց: Այդ մարդը Շաղգյուլի Պողոսն էր, հիվանդոտ, գրեթե Ադոյի հասակին մի մարդ: Պողոսը նրան դեմքով զզվանք է ցույց տալիս եւ հեռանում: Այդ բանը նկատում է դավաճանը: Նա, չնայած Պողոսի վերաբերմունքին, ցանկանում էր ժպտալով մոտենալ նրան ու գրկել՝ թաքցնելով Պողոսից ստացած խայթի հետեւանքը: Պողոսի հեռանալուց հետո Ադոն հասկացավ, որ իր դավաճանությունը հայտնի է համագյուղացիներին:

Մի օր, երեկոյան, մթնով Ադոն մտավ գյուղը: Երբ մտավ իրենց տունը, թվաց, թե տանեցիները ճչալով կփաթաթվեն իրեն եւ ուրախությունից կթռչկոտեն: Սակայն կինը նրան բարեւեց թթված դեմքով: Տղաները երկուսով էլ չմոտեցան ու չբարեւեցին: Նրանք իրենց հոր մասին լսած լուրերի դառնությունն զգացին սեփական տան պատերի մեջ եւ փնթփնթալով տանից դուրս եկան: Այդ պահից տղաներից մեկն այլեւս իրենց տունը չմտավ: Ինչպես ասում են, նա իր գլուխը վերցրեց եւ հեռացավ ոչ միայն հայրենի տնից, այլեւ՝ հայրենի գյուղից ու շրջանից: Նա բնակություն հաստատեց մի հեռավոր վայրում ու ապրում է այնտեղ՝ իր հոր արարքի հետեւանքով առաջացած նախատինքի ու ամոթի քողը երեսին: Մյուս որդին տուն դարձավ մի շաբաթ հետո, երբ Ադոն այլեւս տանչ չէր:

Նա գյուղում մնաց ընդամենը երկու օր: Նրա տուն գալու լուրն իսկույն տարածվեց, բորբոքեց ու ալեկոծեց ոչ միայն իր գյուղի մարդկանց, այլեւ ամբողջ շրջանի հասուն բնակիչներին: Բոլորը անեծքով խոսոում էին այն մասին, որ դավաճանը տուն է եկել կեղծ փաստաթղթերով: Տներում, փողոցներում, հասարակական վայրերում, կոլտնտեսության աշխատատեղերում եւ ամենուրեք մարդկանց զրույցի թեման Ադոն էր եւ նրա դավաճանությունը: Ատելությունն ու զայրույթը գնալով սաստկանում էին: Ոչ մի մարդ չէր ցանկացել նրան տեսնել ու հետը խոսել: Պողոսը, որ նրա դրկիցն էր, կնոջն ու երեխաներին հանձնարարել էր, որ հանկարծ Ադոյի տան դուռը չբացեն: Պողոսը հանդիսավորությամբ թքել էր այն ճանապարհին, որը տանում էր Ադոյի տունը: Նույն ձեւով էին խոսում ու գործում մյուս հարեւանները: Շատերը նույնիսկ չէին ուզում ոտք դնել այն ճանապարհին, որի վրայով Ադոն քայլել եւ մտել էր իր տունը: Նրա հետ տհաճությամբ խոսել էր միայն իր կինը: Նա նկարագրել էր ժողովրդի ատելությունն ու զայրույթը Ադոյի նկատմամբ եւ ավելացրել հառաչելով.

-Այնպես ես դավաճանել, որ մարդկանց երեսին չենք կարող նայել: Իրոք, Ադոյի կինն ու երեխաները համագյուղացիների առջեւ իրենց զգում էին մի տեսակ ստորացած: Թեեւ ոչ ոք չարությամբ չէր ակնարկում նրանց ով լինելը, բայց խեղճ կինն ու տղաներն իրենց հաշվում էին պատվազուրկ, ամաչում էին մարդկանց երեսին ուղիղ նայել եւ Ադոյին ատում էին այնպես, ինչպես ատում են ժողովրդի թշնամուն:

Ադոյի տուն գալու լուրը արդեն հասել էր շրջանի պետական անվտանգության ներկայացուցչին, որը Ադոյի զրպարտագրերով եւ երես առ երես

Արտաշ Զոհրապի Ստեփանյան

հորինված մեղադրանքներ տալով շատ ու շատ մարդկանց դատել էր տվել ու քշել աքսորավայրերը՝ որպես ժողովրդի թշնամիների: Հիշելով այդ բոլորը՝ պետական անվտանգության ներկայացուցիչը մտածում էր այն մասին, որ Ադոն իրեն եւս խաբած կլինի գյուղխորհրդի նախագահ աշխատած ժամանակ եւ, անշուշտ, նրա ներկայացրած փաստերով ու մեղադրանքներով բանտարկված մարդկանց շարքում կլինեն նաեւ անմեղներ: Պատական անվտանգության ներկայացուցիչը սիրով ուզում էր կալանավորել եւ պատասխանատվության ենթարկել Ադոյին, բայց ձեռքին գրավոր ոչ մի փաստ չկար՝ նրան կալանավորելու համար:

Այնուամենայնիվ, նա Ադոյին կանչեց իր գրասենյակն ու ստուգեց նրա փաստաթղթերը, որոնցով մեղադրանք հարուցել չէր կարելի:

Տեսնելով իր նկատմամբ համագյուղացիների, իր հարազատ տղաների եւ պաշտոնական անձանց խայթող վերաբերմունքը՝ Ադոն երկու օրից հետո ծլկեց՝ կնոջն ասելով, թե գնում է հեռագնա աշխատանքի Ռուսաստանի քաղաքներում: Նա ուղղակի փախավ ու պոկվեց ժողովրդի վրեժխնդրությունից:

Ադոյի՝ գյուղում կարճատեւ մնալու ժամանակ, երբ խումբ-խումբ մարդիկ կրակի վրա դրված կաթսայի նման եռում էին, Դունուշն ու Ռափոն զարմանալիորեն վրեժխնդրության փորձեր չէին անում: Ավելին, Դունուշի մեջ ուժեղանում էր հպարտության զգացումը եւ Ադոյի ու նրա նմանների նկատմամբ ատելության փոխարեն նրա մոտ հասունանում էր արհամարհանքը:

Դունուշն Ադոյին համարում էր մանր ու թույլ մարդ, մի ողորմելի արարած, որ ուզած ժամանակ կարող է իր հավատն ու սկզբունքը ծախել եւ շիտակ քայլելու փոխարեն սողալ, մեկ ձեւանալ կոմունիստ, մեկ ձեւանալ ֆաշիստ, մի մարդ, որին լքում են իր իսկ զավակները: Նա մտովի գնահատում էր հայրենիքի համար իր որդիների զոհաբերությունը եւ այդ բանը հակադրում էր Ադոյի արարքներին: Այդ իմաստով էլ Դունուշը գտնում էր, որ Ադուն ավելի շուտ արժանի է արհամարհանքի, քան թե վրեժխնդրության: Բացի դրանից՝ դավաճան Ադոյի վիճակով Դունուշն իրեն բավարարված էր զգում:

Ըստ Դունուշի՝ Ադոյի նկատմամբ ժողովրդի այդպիսի վերաբերմունքը գնդակահարելուց ուժեղ պատիժ էր: Ադոյի ծլկվելուց հետո բավականին անհանգստացած էր պետական անվտանգության շրջանային ներկայացուցիչը: Նա կամաց-կամաց սկսում էր համոզվել, որ Ադոյի նախաձեռնությամբ բանտարկվածներն անմեղ են, եւ ինքը լավ չի խորացել նրանց նկատմամբ քաղաքական մեղադրանք հարուցող փաստերի մեջ: Հետեւաբար կուսակցությունը եւ կառավարությունը իրեն՝ պետական անվտաբգության ներկայացուցչին, խիստ պատասխանատվության կենթարկեն: Ուրեմն նա եւս պետք է հետեւի ու գտնի Ադոյին եւ իր հաշիվները մաքրի նրա հետ:

/շարունակելի/

Արտաշ Ստեփանյան

ԱՍՔ ՄԻԲՈ ԵՎ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ. ՀԱՅԲԱՊԵՏ ԵՎ ԴՇԽՈՒՀԻ

/սկիզբը՝ նախորդ համարում/

Ահա այսպես բարձրացավ Կոլոտ աղան առեւտրական աշխարհի ամենաբարձր աստիճանին՝ շնորհիվ իր բնատուր խելքի, անսահման աշխատասիրության եւ մարդկային բարձր հատկանիշների:

***

Կոլոտ աղայի ծնողներն իրենց որբուկին չէին թողել անսպառ գանձեր եւ ոչ էլ՝ պալատներ: Սակայն նա իր ծնողներից ժառանգել էր շատ բարեմասնություններ. մորից ժառանգել էր նուրբ ու զգայուն սիրտ, անսպառ աշխատասիրություն, իսկ հորից՝ անհողդողդ կամք եւ առնական դիմացկունություն:

Աղան հիշում էր, թե ինչպես մի անգամ, երեւանցի մի քանի առեւտրականներ հոր ընկերոջը եւ իրեն առաջարկեցին իրենց ապրանքը՝ պանիրը, որը ձեռք էին բերել իրենց փոխանակած ապրանքների միջոցով, ավանակներով Երեւան հասցնել: Համաձայնվեցին եւ ճանապարհ ընկան: Անցել էին Խարաբեքը, Բաղեշները, Ս. Խաչը, երբ մի ուժեղ բուք ու բորան, ձնախառն մրրիկ սկսվեց: Դեկտեմբերի կեսերն էր, երկու օր առաջ տեղացած առատ ձյունը ուժեղ քամու պատճառով կարծես պատնեշում էր իրենց երթը: Եղավ մի պահ, երբ ավանակները չէին կարողանում այլեւս առաջ գնալ: Կանգ առան մի ժայռաբլուրի թիկունքում: Ստիպված էին գիշերն անցկացնել լեռներում: Քիչ հետո նորից ձյուն եկավ, այն կարճ տեւեց, բայց ձյան կտրվելուց հետո սկսված ուժեղ քամու պատճառով սառնամանիքը սաստկացավ: Բոլորը սաստիկ մրսում էին, դողում ցրտից, իսկ ապրանքատերերն ավելի շատ անհանգստանում էին ապրանքի համար: Բոլորը ցրտից կուչ էին եկել իրենց չուխաների եւ մուշտակների մեջ: Մենակ ինքը՝ աղան, արհամարհելով բնության դաժան տարերքը, պանիրը հանում էր աղաջրից եւ դարսում մի կողմ, որպեսզի այն չփչանա: Բոլորը զարմացած էին նրա դիմացկունության, կամքի եւ աշխատասիրության վրա:

Առավոտյան եղանակը հանդարտվեց: Նրանք նորից բարձեցին ապրանքը եւ ճանապարհը շարունակեցին: Հասնելով Երեւան՝ ապրանքատերերը նրանց վճարեցին նախօրոք պայմանավորված ճանապարհածախսը: Հետո ավագ ընկերոջ հետ նոր գնած ապրանքներով վերադարձան տուն:

***

Աղան նաեւ լավ դաստիարակ էր, խորհրդատու, ոչ հիշաչար, բայց գործնական: Նա մի անգամ լավ դաս տվեց քաղաքի վարպետներից մեկին: Այդ վարպետը հաճախ խմած վիճակում հայտնվում էր աղայի խանութների դիմաց, օրորվելով, գրեթե ոտքի վրա կանգնել չկարողանալով ու սնապարծորեն հարցնում էր.

-Աղա՛, ինձ պես կարա՞ս խմել:

Չկամենալով այդ պահին գլուխ դնել նրա հետ՝ աղան լռեց եւ գլուխը տարուբերեց:

Հաջորդ օրը աղան սովորականից շուտ է վերադառնում տուն: Տանեցիները՝ կինը եւ տան ծառայողները, զարմացած էին նրա՝ այդքան վաղ վերադառնալուց եւ աղայի տարօրինակ հայացքից: Աղան կարգադրություն արեց, որ երկու-երեք ժամից հետո տան ընդարձակ դահլիճում սեղան պատրաստեն հրավիրված հյուրերի համար: Ապա տան ծառայողներին ուղարկեց նախատեսված հյուրերին հրավիրելու: Նրանցից մեկը գնաց վարպետի հետեւից: Նշված ժամին եկան բոլոր հրավիրվածները: Վարպետին ասել էին, որ աղան կանչում է, տանը գործ կա անելու: Նա էլ, ուրիշ ոչինչ չկասկածելով, իր հետ վերցրել էր որոշ գործիքներ:

Ընդունարանում նրան տեղեկացրին, որ հաց ուտելուց հետո նոր միայն աղան վարպետին գործ կհանձնարարի: Վարպետն անցավ դահլիճ: Բոլոր հրավիրված հյուրերը նստած էին սեղանի շուրջ: Սեղանի գլխավերեւում բազմեց Կոլոտ աղան՝ երկու այլ աղաների հետ միասին: Ճաշկերույթին մասնակցում էին ոչ միայն աղաներ, պաշտոնավոր անձինք, այլ նաեւ քաղաքի ճանաչված ու հարգված մարդիկ՝ մանկավարժներ եւ արհեստավորներ: Ճաշկերույթն սկսվեց, թամադա ընտրեցին Երեմ աղային՝ Մինասյան ազգանունով, որը մեր տարածաշրջանի նշանավոր բարերար եւ բարի հոգու տեր անձնավորություն է եղել: Թամադան միջին հասակից քիչ բարձր, սեւորակ աչքերով, լայն ճակատով, սեւ ու գանգուր մազերով, մոտ 50 տարեկան, զարգացած անձնավորություն էր: Իր էությամբ լինելով կենսուրախ, հաճելի եւ զվարճախոս անձնավորություն՝ նա հենց սկզբից հետաքրքիր եւ մտերմիկ մթնոլորտ ստեղծեց խնջույքի սեղանի շուրջ: Բոլորն ասում-խոսում, ուտում-խմում էին: Թամադան, որոշ կենացներ խմելուց հետո, առաջարկեց բաժակ բարձրացնել պատվելի տանտիրոջ՝ Կոլոտ աղայի կենացը: Բոլորը պատշաճ կարգով խմեցին այդ կենացը: Պետք է խոսեր աղան, հերթը նրանն էր: Սակայն նա չէր շտապում ասելու իր խոսքը եւ շնորհակալություն հայտնելու թամադային: Նա վերջին մի քանի րոպեների ընթացքում աչքը չէր կտրում վարպետից: Վերջինս սեղանի շուրջ իրեն շատ ազատ էր զգում, անհոգ ուտում-խմում եւ օգտվում էր առատ սեղանից, որի պարունակությունը եւ լիությունը վարպետը երբեք չէր տեսել իր կյանքում: Վերջապես աղան ոտքի կանգնեց, բաժակը վեր բարձրացրեց եւ շնորհակալություն հայտնեց իր կենացը խմելու եւ հրավերը չմերժելու համար: Ապա խոսքն ուղղեց վարպետին.

-Վարպե՛տ, կկարողանա՞ս ինձ պես ապրել...

-Չէ-չէ, աղա,- գլուխը կախ արտաբերեց հեզաբարո եւ ամոթխած վարպետը:

-Ասա՛, ինձ պես կկարողանա՞ս ապրել,- շարունակեց աղան,- թե չէ աշխատում, տանջվում, չարչարվում ես, երկու կոպեկ է հենց ընկնում ձեռքդ, անմարդկային ձեւով խմում ես, գալիս ինձ պես աղա մարդուն լոպազ-լոպազ հարց ես տալիս՝ աղա, ինձ պես կարաս խմես: Փոխանակ աշխատածդ փողը բաժին անես քո ընտանիքին:

Աղան վերջացնում է իր խոսքը ու նստում: Բոլորը զարմանում են: Վարպետը գլխիկոր հեռանում է այդ խորհրդավոր եւ խորհրդատու խնջույքից:

***

1900 թվականի մայիս ամսվա առաջին կիրակին էր: Առավոտյան աղայի տան մոտ կանգ առավ մի կառք, որից իջավ թարմ կազմվածքով, նոր ածիլված դեմքով, գեղեցիկ ճաշակով հագնված, մոտ 40 տարեկան մի տղամարդ: Շարժուձեւից եւ օտարոտի հայացքից զգացվում էր, որ տեղացի չէր:

Աղան այդ օրը գործի չէր գնացել: Նա կնոջ հետ նստած էր ընդունարանում: Ձեռքը մերթընդմերթ տանում էր գրպանը, այնտեղից դուրս հանում ոսկյա տուփով ժամացույցը եւ նայում ժամին, զգացվում էր, որ նա հյուրի էր սպասում: Երբ դռան կոչնակի ձայնը լսեց, ոտքի կանգնեց եւ ուրախ արտաբերեց.

-Վերջապես եկավ, գործ ենք սկսելու սերունդների ու դարերի համար:

/շարունակելի/

Սամվել Աղլամազյան



ԴԻՖՈՒԶԻԱՆ ԿԵՆՑԱՂՈՒՄ ԵՎ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

Մարտունու Մնաց Մելիք-Շահումյանցի անվան N 1 հիմնական դպրոցում 7-րդ դասարանի 20 աշակերտները՝ ֆիզիկայի ուսուցիչ Մանվել Հովսեփյանի ղեկավարությամբ իրականացրեցին նախագծային աշխատանք ֆիզիկա առարկայից՝ «Դիֆուզիան կենցաղում եւ մեր կյանքում» խորագրով:

Նախագծային աշխատանքի նպատակն էր՝ սովորողներին տալ գիտելիքներ դիֆուզիայի երեւույթի, կիրառության սահմանների մասին: Սովորողները նախագծային աշխատանքի ընթացքում բազմաթիվ փորձերի միջոցով ցուցադրեցին դիֆուզիայի երեւույթի բազմաթիվ օրինակներ. սկսած մարինացված վարունգի, թթու դրած կաղամբի, վերջացրած թխվածքի պատրաստման փորձերով:

Աշակերտները փորձով ապացուցեցին դիֆուզիայի արագության կախումը ջերմաստիճանից եւ հեռավորությունից՝ այն ներկայացնելով գրաֆիկորեն: Նախագծային աշխատանքի իրացման ժամանակահատվածում անցկացվեցին սոցիալական հարցում դեռահասների եւ տարիքով մարդկանց միջավայրում՝ դիֆուզիայի երեւույթի մասին օգտակար եւ վնասակար հատկությունների վերաբերյալ:

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՀԱՅՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Մարտունու արվեստի դպրոցում տեղի է ունեցել նկարչական ցուցահանդես՝ նվիրված Հայրության օրվան:

Ինչպես տեղեկացրեց Մարտունու արվեստի դպրոցի տնօրեն Հասմիկ Նազարյանը, ցուցահանդեսին մասնակցել են Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի, համայնքի կրթամշակութային հաստատությունների աշխատակիցներ, արվեստի դպրոցի ուսուցչական կազմը եւ սաները, ծնողներ, հյուրեր:

-Ցուցահանդեսը բացահայտում էր երեխաների հոգու աշխարհը, սերն ու նվիրումն իրենց հայրերի հանդեպ՝ արտահայտված նրանց պատկերած գծերով ու գույներով: Հրաշալի տրամադրություն էր տիրում դահլիճում: Սաների հայրերից շատերը ներկա էին ցուցահանդեսին եւ, գտնելով իրենց իսկ պատկերով աշխատանքները, անթաքույց ժպտում էին, հուզվում: Ներկայացված աշխատանքներում արտացոլված էին մեր լեռնաշխարհի աշխատասեր, մարդասեր ու հարենասեր հայրերի յուրօրինակ կերպարները, որոնք հաճելի ապրումներ պարգեւեցին ցուցահանդեսի մասնակիցներին,-ներկայացրեց Հասմիկ Նազարյանը:

«Գեղամա աշխարհ»

5.qxd 18/03/2025 11:41 Page 7

«ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ԼԻԳԱՅԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ

«Դպրոցականների բասկետբոլի լիգա» մարզական խաղերի Ճամբարակի համայնքային փուլի 10-12 տարեկանների տարիքային խմբի մրցումներն անցկացվեցին 2025 թվականի մարտի 9-ին՝ Ճամբարակի ավագ դպրոցիմարզադահլիճում: Այստեղ ուժեղագույնը Թթուջուր գյուղի միջնակարգ դպրոցի թիմն էր: Երկրորդ հորիզոնականում Ճամբարակի Մ. Քոչարյանի անվան N 2 հիմնական դպրոցի թիմն էր, իսկ երրորդ հորիզոնականում՝ Դպրաբակ գյուղի միջնակարգ դպրոցի թիմը:

Այս փուլի 13-15 տարեկանների տարիքային խմբի մրցումներն անցկացվեցին մարտի 15-ին: Դիտարժան մրցապայքարի արդյունքում հաղթող ճանաչվեց Վահան գյուղի միջնակարգ դպրոցի թիմը: Մրցանակային երկրորդ եւ երրորդ տեղերը գրավեցին, համապատասխանաբար, Ճամբարակի N 1 հիմնական եւ Դպրաբակ գյուղի միջնակարգ դպրոցների թիմերը:

Մարտունու համայնքային փուլի 13-15 տարեկանների տարիքային խմբի եզրփակիչ խաղերը տեղի ունեցան Աստղաձոր գյուղի միջնակարգ դպրոցի մարզադահլիճում, մարտ 8-ին: Մարզային փուլի ուղեգիրը բաժին հասավ Մարտունու Ս. Դարբինյանի անվան N 2 հիմնական դպրոցի թիմին: Մրցանակային եռյակում էին նաեւ Վերին Գետաշենի N 1 միջնակարգ եւ Մարտունու Մնաց-Մելիք Շահումյանի անվան N 1 հիմնական դպրոցների թիմերը:

Գավառի եւ Վարդենիսի համայնքային փուլերը մեկնարկեցին մարտի 15-ին:

Գավառի համայնքային փուլի մրցումներն անցկացվեցին Հայրավանքի միջնակարգ դպրոցի մարզադահլիճում: Մարզային փուլի ուղեգրի համար պայքարի մեջ էին մտել 10-12 տարեկանների տարիքային խմբի դպրոցական թիմերը: Ծավալված հետաքրքիր եւ համառ պայքարի արդյունքում առաջին տեղը գրավեց Ծովազարդի միջնակարգ դպրոցի թիմը: Երկրորդ հորիզոնականում էր Գավառի Պ. Ղանդիլյանի անվան N 2 միջնակարգ դպրոցի թիմը, իսկ երրորդ հորիզոնականում՝ Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոցի թիմը: 13-15 տարեկանների տարիքային խմբի մրցումներն անցկացվեցին մարտի 16-ին: Այստեղ ուժեղագույնը Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոցի թիմն էր: Երկրորդ տեղում Ծովազարդի միջնակարգ դպրոցի թիմն էր: Մրցանակային եռյակը եզրափակեց Գավառի Պ. Ղանդիլյանի անվան N 2 միջնակարգ դպրոցի թիմը:

Վարդենիսի համայնքային փուլի 10-12 տարեկանների տարիքային խմբի մրցումներն անցկացվեցին Վարդենիսի N 3 հիմնական դպրոցի մարզադահլիճում: Պայքարը ծավալվեց հայտ ներկայացրած վեց դպրոցական թիմերի միջեւ: Այստեղ ուժեղագույնը դաշտի տերերի թիմն էր: Երկրորդ տեղում էր Վարդենիսի N 4 հիմնական դպրոցի թիմը, իսկ երրորդ հորիզոնականը զբաղեցրեց Վարդենիսի էդ. Պողոսյանի անվան N 2 հիմնական դպրոցի թիմը: 13-15 տարեկանների տարիքային խմբի թիմերը պայքար մեջ մտան մարտի 16-ին: Այստեղ եւս ուժեղագույնը դաշտի տերերի թիմն էր: Երկրորդ հորիզոնականում Գեղամասար գյուղի միջնակարգ դպրոցի թիմն էր, իսկ մրցանակային եռյակը եզրափակեց Կարճաղբյուրի Ա. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի թիմը:

Համայնքային փուլի մրցումներից հետո հայտնի դարձան այն թիմերը, որոնք հանդես կգան Գեղարքունիքի մարզային փուլում:

10-12 տարեկանների տարիքային խմբում մրցապայքարի մեջ կմտնեն Ծովազարդի, Վերին Գետաշենի N 1, Թթուջուր գյուղի միջնակարգ եւ Սեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան N 1, Վարդենիսի N 3 հիմնական դպրոցների թիմերը:

13-15 տարեկանների տարիքային խմբում մրցապայքարը կծավալվի Մարտունու Ս. Դարբինյանի անվան N 2, Գավառի Հ. Թումանյանի անվան N 3, Վարդենիսի N 3 հիմնական եւ Վահան, Դդմաշեն գյուղերի միջնակարգ դպրոցների թիմերի միջեւ:

Գեղամ Չարվադարյան

ՀԱՅՏՆԻ Է ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՂԹՈՂԸ

Հայաստանի Հանրապետության մարզերի եւ Երեւան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների «Սպարտակիադա» մարզական միջոցառման շրջանակում Գեղարքունիքի մարզի դպրոցականների միջեւ անցկացվել են «Դիպուկ հրաձիգ» հրաձգության մարզային մրցումներ: Այն անցկացվել է երկու փուլով՝ համայնքային եւ մարզային:

Համայնքային փուլի մրցումներն անցկացվել են փետրվարի 27-28-ին, որի արդյունքում յուրաքանչյուր համայնքից երկու լավագույն դպրոցական թիմեր մասնակցել են մարտի 14-ին Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոցի հրաձգարանում կազմակերպված մարզային փուլի մրցումներին: Թիմի կազմում ընդգրկվել էին 4 տղա եւ 4 աղջիկ: Մրցումներն անցկացվել են օդամղիչ հրացաններով՝ մինչեւ թիրախ 10 մետր հեռավորությունից: Հրաձգության միջազգային ֆեդերացիայի կանոնակարգի համաձայն յուրաքանչյուր հրաձիգ կատարել է 8 կրակոց, որից հաշվարկային է եղել 5 լավագույնը: Ծավալվել է հետաքրքիր եւ համառ պայքար, որի արդյունքում թիմային հաշվարկով 385 միավորով առաջին հորիզոնականը զբաղեցրել է Զոլաքար գյուղի N 1 միջնակարգ դպրոցի թիմը: Երկրորդ տեղը 345 միավորով գրավել է Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան N 1 հիմնական դպրոցի թիմը, իսկ երրորդ տեղում, 334 միավորով, Գավառի Գեորգի Մնացականյանի անվան N7 միջնակարգ դպրոցի թիմն էր:

-Նմանատիպ մրցումները նպաստում են հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասադության ռազմահայրենասիրական դաստիարակությանը, հրաձգությունն մարզաձեւի նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը - նշել է մրցումների գլխավոր մրցավար Կամո Ավետիսյանը:

2025 թվականի ապրիլի 8-ին Երեւանում կայանալիք հրաձգության մրցումների հանրապետական փուլում Գեղարքունիքի մարզը կներկայացնի Զոլաքար գյուղի N 1 միջնակարգ դպրոցի թիմը:

Գեղամ Չարվադարյան

ՄԵԾԱՐՎԵԼ ԵՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ԱՄԵՆԱՏԱՐԵՑ ԿԱՆԱՅՔ

Կանանց տոնի միամսյակի շրջանակներում Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ գյուղի վարչական ղեկավար Ահարոն Խաչատրյանի եւ մշակույթի կենտրոնի աշխատակիցների նախաձեռնությամբ մեծարվել են գյուղի ամենատարեց կանայք ու կենսաթոշակի անցած ուսուցչուհիները:

Ինչպես տեղեկացրեց Գեղհովիտ գյուղի վարչական ղեկավար Ահարոն Խաչատրյանը, նախաձեռնող խմբի անդամներն այցելել են 1933 թվականին ծնված Զնաշխարիկ Ըխտոյանին, Վիկտոր Ոսկանյանին, Արաքսյա Մխիթարյանին եւ Շամամ Բարսեղյանին:

-Մոտ մեկդարյա նրանց կյանքն անցել է պատերազմի, սովի, զրկանքների ու դժվարությունների միջով, բայց նրանք մնացել են բարի ու սիրով լի, օրհնանքն ու բարի խոսքը շուրթերին եւ ապրում են՝ կյանքի տված դասերի իրենց գիտելիքներն ու փորձը հարազատներին փոխանցելով: Նրանք իրենց շոյված զգացին ոչ միայն նվիրված ծաղկեփնջերից, այլ նաեւ իրենց ուղղված մեծարանքի ու երախտագիտության խոսքերից: Ապա այցելեցինք ու ծաղիկներ նվիրեցինք այն ուսուցչուհիներին, ովքեր արդեն թոշակառուներ են ու վայելում են իրենց վաստակած հանգիստը, սակայն հոգով ու սրտով մնում են մատաղ սերնդի, իրենց կրթած ու դաստիարակած աշակերտների հետ,- ներկայացրեց Ահարոն Խաչատրյանը:

Խոսրով Խլղաթյան

ԼՃԱՇԵՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՏԱՐԱՍ ՇԵՎՉԵՆԿՈՅԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՆԿԱՐՉԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Լճաշեն գյուղի մշակույթի տանը կազմակերպվել է ուկրաինացի մեծ բանաստեղծ, նկարիչ, քանդակագործ եւ քաղաքական գործիչ Տարաս Շեւչենկոյի ծննդյան օրվան նվիրված նկարչական մրցույթ: Այն կազմակերպել է «Ուկրաինական մշակութային կենտրոնը»:

Լճաշենի մշակույթի տանը տեղի ունեցած մրցույթին մասնակցել են Լճաշենի մանկական արվեստի դպրոցի սաները: Երեխաներն իրենց աշխատանքներում պատկերել են տեսարաններ բանաստեղծի ստեղծագործություններից, նրա դիմանկարը, ուկրաինական բնապատկերներ, կենցաղը եւ այն ամենը, ինչը կապ է ունեցել Շեւչենկոյի արվեստի հետ:

Միջոցառումն անցել է ջերմ մթնոլորտում: Միջոցառման պատվավոր հյուրն է եղել Հայաստանում Ուկրաինայի Հանրապետության ժամանակավոր հավատարմատար Վալերի Լոբաչը, ով էլ ամփոփել է մրցույթի արդյունքները:

Հաղթողներին եւ դասատու Ա.Սարիբեկյանին հանձնվել են նվերներ, իսկ մնացած սաներին՝ քաղցրավենիք:

Արմինե Ղուկասյան

ԳԱՎԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է «ԶՄԵՌԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐ-2025»ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԸ

Գավառի համայնքապետարանի նախաձեռնությամբ անցկացվել է «Գավառի ձմեռային մարզական խաղեր-2025» մարզամշակութային փառատոնը:

Մարզամշակութային փառատոնի ընթացքում Գավառ համայնքի հանրակրթական դպրոցների եւ Գավառի մարզադպրոցի սաներն իրենց ուժերն են չափել պարանի ձգում, կշռաքարի բարձրացում, ձնագնդիով հարված նշանակետին, սպորտլանդիա մարզաձեւերում եւ ազգային խաղաձեւերում:

Պարային կատարումներով մասնակիցներին ողջունել են Գանձակի երաժշտական դպրոցի պարարվեստի բաժնի սաները:

Մարզամշակութային փառատոնն անցել է մրցակցային մթնոլորտում: Հաղթողները պարգեւատրվել են Գավառ համայնքի ղեկավարի պատվոգրերով եւ գավաթներով:

Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի անունից շնորհակալագրերի են արժանացել նաեւ մարզամշակութային փառատոնի կազմակերպչական աշխատանքներում ակտիվություն ցուցաբերած մրցավարները:

Ալվարդ Մանուկյան

5.qxd 18/03/2025 11:41 Page 8

ՄՈՐՈՒՔ ԿԱՐՈՅԻ ՎՐԵԺԸ
/Քնարահայինական պոեմ/



/սկիզբը՝ նախորդ համարներում/

10

-Բոլշեւիկները բանակ չունեին: Բաքվի կոմունան
Ճակատը թողել, փախչում էր նավով,
Բայց նրանց ճամփան փակեցին ծովում
Ռազմանավերը տիրող ուժերի:
Նրանց բանտ դրին: Կռիվը սակայն
Եկավ, մոտեցավ Բաքվի սահմանին:
Ու զորքը հայոց արեց ամեն բան,
Որ հանկարծահաս խուճապը կանխի,
Դիմադարձ կանգնի ոսոխին դաժան:
Երկու կողմերից շատ արյուն հեղվեց,
Սակայն, ի վերջո, ելքը այդ կռվի
Հոգուտ թուրքական կողմի վճռվեց:
Մեր ուժերն անգամ, որ եկել էին
Հայոց բանակին զինված օգնության,
Ի զորու չեղան կանխել թուրքերին,
Նրանց միացած թաթար զորքերին,
Որ եկան ամբողջ ոխը թափելու
Անզեն, անպաշտպան հայերի գլխին...
Գեհենը իջավ ծաղկուն քաղաքին,
Երբ թուրքը եկավ ջարդ ու թալանի,
Մադիկ փախուստի ելք էին փնտրում՝
Եղեռնազարկից մի կերպ փրկվելու:
Անհնարին էր ցամաքով փախչել
Գազանի ահից ու աչքից հեռու:
Միակ բաց ելքը ծովն էր մնացել
Ու նավերը մեր՝ պատրաստ մեկնելու:
Բոլշեւիկները բանտից դուրս եկան
Թուրքերի՝ քաղաք մտնելու պահին
Ու հանձնվեցին մեր բարի կամքին՝
Որպես անձնատուր, անզեն գերյալներ՝
Փախչելու ուրիշ ճար չունենալով...
Մենք լավ գիտեինք, որ ձեռք ենք բերել
Անչափ կարեւոր, թանկարժեք ավար,
Որն էլ աճուրդով պիտ վաճառեինք
Լավ գին տվողին, ով էլ որ լիներ:
Լենինն ուզում էր նրանց կենդանի՝
Որպես կուսակից, անգին ընկերներ,
Թուրքը ուզում էր գերել ու կախել՝
Որպես իր երթին անհաշտ թշնամի:
Ցովի մյուս ափին՝ տաք Թուրքեստանում,
Մի քանի տեղից բարձրաստիճան
Բանագնացներ եկան-գնացին՝
Առաջարկելով նրանց փրկագին
Ու ազատության երաշխիք-պայման:
Մենք սակարկեցինք թանկն ու էժանը
Ու որոշեցինք, որ հանձնենք նրանց
Ցարական գահին նստած Լենինին՝
Իր առաջարկած մեծ փողի դիմաց:
Բայց բոլշեւիկյան մի ուրիշ թեւից
Եկավ մի ուրիշ, գաղտնի գրություն.
«Գնդակահարել քսանեւվեցին
Շատ ավելի մեծ, շահեկան գնով,
Աղջակումայի ավազուտներում,
Երկաթգծի մոտ, նոր բացվող լույսով»:
...Ես էի նրանց իմ հատուկ ջոկով
Դեպ մահվան հովիտ քայլելով տանում:
Գնդակահարման գինն էր վճարված,
Չկար ոչ մեկին ներում ու բեկում:
Մենք շարք կանգնեցրինք կոմիսարներին,
Առաջին տեղում՝ ձեր Շահումյանին:
Սարսափ կար նրա տանջահար դեմքին
Ու անհուն թախիծ՝ կապույտ աչքերում:
Գայլի աշխարհ էր, անվերջ հոշոտում,
Թաքը եղեռնի ճանկում էր անկուշտ
Թե՛ հերոսներին, թե՛ տկարներին,
Ու ամենքս էինք մի-մի մահապարտ:
Ձեռքս չէր գնում, բայց կար հրաման,
Հապաղել չկար, չկար խիղճ ու գութ:
Առաջինը ես առաջ պարզեցի
Մաուզերը իմ ձեր հայի սրտին
Մոտիկ, շատ մոտիկ, քանի քայլ հեռու:
Մատս սեղմեցի զենքիս ձգանին:
Եվ գնդակը կույր, սակայն շեշտակի
Շամփրեց-անցավ տաք սրտի միջով:
Նա ձեռքը տարավ իր բացված վերքին,
Օրորվեց դանդաղ իր կանգնած տեղում,
Ապա անզգա փռվեց ավազին:
Ամեն ինչ այսպես, այս ելքով եղավ...
Կրկին լայն ժպտաց ինգլիզի սպան
Ու ակնկալեց, որ Մորուք Կարոն
Խանդավառորեն, սիրով վեր կելնի,
Հովացած սրտով կփարվի իրեն
Ու իր կենացը մեկ շնչով կըմպի:
Բայց Կարոն գամված մնաց աթոռին՝
Սուզված խոհերի անհատակ ծովում:
Ապա փոթորկվեց հոգին տառապյալ
Կյանքի մութուլուս առեղծվածներում:
«Ո՞վ է այս շեկլիկ բրիտանացին.
Մա՞րդ է, թե հրեշ սատանայածին,
Որ իր հեռավոր տուն-տեղը թողել,
Եկել, չոքել է ազգերի շնչին,
Կրքոտ շրջում է ուրիշ աշխարհներ,
Դավի կրակը վառում-բորբոքում,
Շեներն ավերում ու տանում ավար
Իր բույնն անիծյալ, ուր չեն հասկանում,
Թե որքան արյուն, արցունք է թափվում
Պատերազմների լափող բոցերում,
Ի՞նչ է կորուստը սուրբ հայրենիքի,
Եղեռնը անսանձ՝ բովանդակ ազգի,
Ուր մորթոտվում են կին ու ամուսին,
Ցնող, երեխա՝ անմեղ ու անզեն,
Ուր չեն ըմբռնում սարսափը գաղթի
Եվ պանդխտության վերքը ցավագին:
Ահա թե ինչու այդչափ լրբորեն,
Այդքան սառնասիրտ, առանց հույզերի,
Այս մարդակերը արարքն է պատմում
Անցած օրերի ոճրագործության,
Որ թվում է, թե կյանք չի հոշոտել,
Այլ գետնին ընկած ծիլ է տրորել:
Ու շրջապատում պարծենում է դեռ
Անզեն իր գերուն զարկելու համար...
Ո՞վ Շահումյանին կարգեց բոլշեւիկ,
Ֆիդայիներին՝ ազգամոլ դաշնակ,
Ո՞վ հային արեց հային թշնամի
Եվ մի ողջ երկիր ու ազգ վաճառեց:
Ի՞նչ տարբերություն ռուս չեկիստի
Եվ ինգլիզի սպայի միջեւ.
Նույն են երկուսն էլ՝ դաժան, անհոգի՝
Խորամանկ դահճի բութ կերպարանքով :
Չեկիստի սրից փախած Ֆիդային
Իրանի հողում ուղիղ, դամառդեմ
Հանդիպել է այլ շիկահրեշի,
Որի երկնագույն, փայլող աչքերից
Նենգ ու զազրելի դավն է պսպղում:
Չկա աշխարհում անեղծ մի անկյուն,
Որ թագավորի խնդություն ոգու,
Աստծուց ընծայված մարդասիրություն,
Բարեգութ ձեռքով հերկված անդաստան,
Ուր չարյունոտվի հանապազօրյա
Հացը՝ շաղախված քրտինքով արդար:
Չկա՛ աշխարհում եւ ոչ մի անկյուն,
Որը չի չափվել այս ճիվաղների
Ամենակործան հաշվարկ-քայլերում՝
Թիզ առթիզ, մատ-մատ, մետր առ մետր:
Եվ ով էլ մեռնի, որքան էլ մեռնեն,
Դա չէ էական, աշխարհ են կիսում
Զոհերի գնով՝ հազար ու միլիոն...
Եվ այս չարքերը արյուն են լակում՝
Աշխարհը կիսած երկու ճամբարի,
Հարկ եղած դեպքում ռազմի փող փչում,
Ոգած պահին էլ նստում խնջույքի...
Երկու որբ մնաց հայ Շահումյանից
Ու մի այրի կին...ու մի սին երազ,
Որ նույն չարքերի ձեռքով վաճառվեց
Ավազուտներում Ազջակումայի...
Լրտեսն ինգլիզի հեռու Թավրիզում
Աղետներով լի մեր այս օրերում
Ի՞նչ նոր, հերթական դավ է որոճում
Արյան մեջ սուզված աշխարհի գլխին...»:
Հանկարծ Կարոյի աչքերին գծվեց
Շնագայլային քաղցի կերպարանք,
Ոսկոր կտրատող, ահարկու ժանիք,
Մագիլներ ճանկռող՝ դեպ իրեն պարզած:
Կարոյի ձեռքը գնաց իր զենքին,
Ու մաուզերը խաղաց մատներում:
Վճիռը ծնվեց ակնթարթորեն,
Հույզերի ծովի տվայտանքներում:
-Դու իմ հայի՞ն ես գնդակահարել՝
Իր տնից հեռու, առանց հանցանքի,
Դե հիմա սատկիր, որպես շուն անտեր՝
Քո բնից հեռու, զարկով վրեժի՝
Կարծես թե տեղդ չեն էլ իմացել...
Ասաց ու պարպեց գնդակները իր
Բրիտանացու թավամազ գանգին...
Մեռնողը ճչաց, թեքվեց աթոռին
Ու արնաշաղախ ընկավ հատակին՝
Քեֆի սեղանին նստած այրերի
Շշմած, քարացած դեմքերի ներքո:
Ցասման եզերքից ակնթարթորեն
Կյանք վերադարձած ֆիդայի Կարոն
Իր պատժիչ ձեռքով սաստեց բոլորին
Ու դանդաղաքայլ, անխոս դուրս գնաց՝
Իր հոգու ցավի բեռը թոթափած...

Խոսրով Խլղաթյան
20.09.2024-7.02.2025թ.
Ք. Գավառ

ՍԵՎԱՆՅԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԱԿՆԱՌՈՒ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԳՐԱՆՑԵԼ ՔԻՔԲՈՔՍԻՆԳԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Սեւան քաղաքի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի մարզիչ Էդգար Ղարիբյանի սաները 2025 թվականի փետրվարի 26-ից մարտի 2-ը Ռուսաստանի Դաշնության Նիժնի Նովգորոդի մարզի Կստովո քաղաքում տեղի ունեցած Եվրասիայի առաջնության խաղերում գրանցել են ակնառու հաջողություններ՝ Հայաստանի հավաքականի կազմում՝ ֆեդերացիայի նախագահ Բաղդասար Միրզիկյանի գլխավորությամբ:

Հայաստանի հավաքականի կազմում Ռազմիկ Շուշանյանը դարձել է Եվրասիայի չեմպիոն՝ գալա եզրափակչում հաղթելով Ղրիմի մարզիկին, նվաճելով չեմպիոնական գոտին: Ալբերտ Գրիգորյանը նվաճել է փոխչեմպիոնի կոչում՝ կիսաեզրափակչում հաղթելով Նիժնի Նովգորոդի մարզիկին: Հովսեփ Ղարիբյանը եւս նվաճել է փոխչեմպիոնի կոչում:

Լեւոն Խաչատրյանը ցուցադրել է տպավորիչ մենամարտ եւ դարձել մրցաշարի բրոնզե մեդալակիր:

Արմինե Ղուկասյան

ԿՈՐԵԼ է
ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դպրաբակ գյուղի բնակիչ, Գավառի պետական համալսարանի Հ. Լեզվի եւ գրականության ֆակուլտետի շրջանավարտ Ռիտա Վազգենի Եղիազարյանի N4402 բակալավրի դիպլոմը՝ տրված պետական հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 27-ի որոշմամբ:
Համարել անվավեր

ԳԵՂԱՄԱ աշխարհ
Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 14. 03. 2025 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: